



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆԴԻՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԲԵՍԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1902

ԹԻՒ 3

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եթէ հոգին չձարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

ԲԱՅՈՒԱԾ Է՝ ԱՆԱՀԻՏ,,Ի

Չ Ո Ր Ր Ո Ղ

Տ Ա Ր Ե Ծ Բ Զ Ա Ն Փ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԻԿ ՊԷՏԻ Է ՎՃԱՐԵԼ

Այն բաժանորդները որ երբորդ տարուան բաժնեգինը չեն վճարած, կը խնդրենք հաճին անյապազ վճարել զայն՝ եթէ կ'ուզեն որ այսուհետեւ շարունակեն ԱՆԱՀԻՏ ստանալ:

ԱԶԴԵՐ

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ

ԹԻՒ 1

ԱՆԱԹՈՂ ՖՐԱՆՍ

ԵՊԻԿՈՒՐԻ ՊԱՐՏԵԶԸ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ա. Զ.



ԹԻՒ 2

ԱԼՖՐԵՏ ՏԸ ՎԻՆԵՐ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ա. Զ.

Այս գրքիցները շրկուեցան ԱՆԱՀԻՏի բաժանորդներէն անոնց որ երբորդ տարուան բաժնեգին վճարած են, ԱՆԱՀԻՏին բաժանորդ չեղողներ կրնան զայն ընդունիլ՝ Մէյ Ֆրանք ղրկելով: Այն բաժանորդները որ պիտի փութան վճարել իրենց անվճար մնացած բաժնեգինները, պիտի ընդունին այս գրքիցները՝ ձրիաբար:

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1902

ԹԻՒ 3

ԳՐՔԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

— 0 —

ՎԱՀԱՆ ԹԷՔԷՆԱՆ, «ՀՈԴԵՐ»

Պ. Թէքէեանի հատորը սիրուն փոքրիկ բուրաստան մըն է, ուր վառ ու պերճ գոյներով շքեղ, խրոխտաձիգ ծաղիկներ չեն որ կը ժայթքեն ցողալից ու հարուստ հողէ մը, այլ ամշկոտ ու փափուկ կէս-թոյրերով, հազուադիւտ ու նուրբ բուրումներու մանր ծաղիկներ, որոնց հրապոյրին կազմաւորմանը մէջ պարտիզականին դիտութիւնը մեծ բաժին մը ունի: Այդ գողտր ու թանկագին բուսականութիւնը, որուն սերմը նորէն սրտէն է որ կը բլլի, եւ որ, մտքի երկայն ուղղումով մը զարգացած ըլլալուն հակառակ, «բնական» արտադրութիւններուն կենդանի հրապոյրը կը պահէ միշտ, պ. Թէքէեանի հատորին մէջ կը կազմէ ինչ որ անխառն ու հարազատ ծնունդն իսկ է հեղինակին խառնուածքին, բայց ամբողջ բուրաստանը անով չէ որ կը լեցուի. անոր շուրջը դիզուած եւ անոր մէջը խառնուած կը տեսնենք տունկեր որ ուրիշ պարտէզներէ, մեծ

բայց օտար պարտէզներէ փոխ են առնուած, եւ մէկ քանի ալ թուփեր որ ջերմոցի մէջ են հասած եւ բնաւ հոտ չունին, ու նոյն իսկ քանի մը ծաղիկներ որ թղթէ են շինուած: Ինչ որ սակայն այդ ծաղկանոցին մէջ ուղղակի պտուղն է պարտիզականին անձնական ստեղծագործութեանը, բաւական է որպէսզի շնորհակալ ըլլանք իրեն՝ մեզի նոր տեսակ բուրում մը եւ երանգ մը վայելել տալ կրցած ըլլալուն համար:

Ածուն զոր պ. Թէքէեան կը բերէ հայ բանաստեղծութեան արախն աւելցնել, կը յատկանշուի նախ՝ խնամքի, կրթութեան ծայրայեղ մտահոգութեամբ մը, որ հեռու է յաճախադէպ երեւոյթ մը ըլլալէ մեր գրական բարքերուն մէջ: Պ. Թէքէեան ֆրաք հագած պարտիզական մըն է, որ գրական բուսարանութեան արեւմտեան վարպետներուն դասերուն երկարօրէն ունկնդրած է, եւ որ իր հունտերը ցանկէ առաջ մանրացոյցի տակ զանոնք կը զննէ ու զանոնք ձեռնոցուած մասներով կը ցրցքնէ իր հողին մէջ զոր նախ հող տարած է մաքրել ամէն մացառէ ու աղբախուղբէ: Այդ ածուն կը բնորոշուի նաեւ — ու հոտ է անոր բուն արժանիքը, — իր բերքին մասնաւոր ինքնաբուխ շնորհովը. պ. Թէքէեան երգիչն է պատանեկան զգայնութեան զգայնութիւն մը որ ամենէն քիչ ու ամենէն զէջ թարգմանուածն է, քանի որ պատանիները կ'աճապարեն միշտ հասուն

հասակի երգը հնչեցնել՝ այնպէս ինչպէս ուսած են իրենց նախորդներէն, դեռ զայն անձնական փորձառութեամբ չըմբռնած, եւ կ'արհամարհեն արտայայտել ինչ որ իրենց տարիքին բնական տպաւորութիւններն իրենց կրներշնչեն: Պ. Թէքէեան կ'երգէ պատանութեան տարտամ անձկութիւնները: բուն բայց անորոշ խանդավառութիւնները, տենդոտ հետաքրքրութիւնն ու ամենի ծագաւր կեանքին, խուսափուկ ու երազկոտ գորովները եւ մեծ, աննպատակ ու վաղանցուկ արարութիւնները, ու այն քիչ համոզուած յուսահատութիւնները որոնք արդիւնքն ոչ ի՛նչ կեանքի փորձառութեանէն յառաջ եկած յուսախարութիւններն են, այլ դեռ յաղուրդ չգտած իղձերու փոթորկումին յաշորդող կարճապիւթուլացումներուն:

«Մովեզերքին վրայ» տիպոգոսով արձակ քերթուածը, որով պ. Թէքէեան իր սկզբնաւորութիւնն ըրաւ Պոլսոյ «Մաղիկ»ին մէջ, այդ դիւզադրած ու իր տենչանքին ինքն իր մէջ այժմէն մաղձոտած հոգիին պատկերը կը ներկայացնէր:

« Ամայի երկար դաշտ մըն է ծովեզերքը. թարմ ու դալար խոտերուն մէջէն ցցուած մամռապատ ժայռեր, արեւին տոկ, կարծես կը խոկան Ջանձրոյթը իրենց անփոփոխ կեանքին... »

« Մովեզերքին վրայ հարթ աւազ մը կը փռուի: Մամռապատ ժայռերուն մէջտեղ, խըրճիթ մը՝ խոռոչանման մերկ պատուհաններով՝ ժայռէ գերեզմանաքարերու մէջ հողէն դուրս ելած գանկի մը պէս՝ կը խոկայ Ոչնչութիւնը կեանքին... »

« Եղբււանի բարակ ծառ մը տունին երեսը կը գատատէ: Պատուհաններէն մէկուն մէջ աղջիկ մըն է նստեր. ձեռքը ծնօտին ու կուրծքը բաց, մի' ս-մինակ հորիզոնին գիրկը խառնուածին դիմաց, կը խոկայ Ասանձնութիւնն իր կեանքին... »

«Տունս»ին մէջ, այդ առաջին երգէն հինգ վեց տարի յետոյ գրուած, պ. Թէքէեան կը բացատրէ պատանիին հոգւոյն մեծագոյն տաղնապը, տագնապը դոր կը կրէ ան՝ երբ յանկարծ բուն կեանքին, գործունէութեան, կոխի, ցաւի կեանքին առջեւ կը գտնէ ինքզինքը՝ երազանքի շրջանին աւարտէն յետոյ:

« Իմ տունս լերան մը ստորոտն է ու գա-

հավէժի մը վրայ, երկուքն ալ հաւասարապէս մթին անտառներով ծածկուած:

« Տո՛ւն է թէ վրան. — այնչա՛փ անգամ տեսարանը փոխուեցաւ աչքիս առջեւ. բարձրանալու տենդով ամէն անգամ քիչ մը աւելի վար գտայ ինքզինքս՝ խորխորատին ճամբուն վրայ: »

«Նաւապետի մը պէս, վտանգի մէջ իր նաւուն կամրջակին վրայ՝ տունիս մէջ ետեւ ու առաջ կը վազեմ հիմա, փոխն ի փոխ քննելու երկու հեռախկարները: »

« Երկուքն ալ իրենց հաւասարապէս մթին անտառներով՝ իմ վրաս կը խուժեն ու շուարած՝ անոնց մէջտեղ խաղուիլ, անհետանալ կը կարճեմ: »

« Բայց մինչգեւ կը ճանչնամ այն անոտոր որ տունիս ետեւը կը տարածուի, գիտեմ անոր թանձրահոծ մթութիւնները ու հազուադէպ լուսահետերը, անոր շատ թունաւոր տունկերը ու ցակաւ անուշաբոյր ծաղիկները: »

« Կը դողամ մտածելով անձանօթ արահետներուն անոր որ առջիս գիտախոյլ կը դահավիժի, կ'իջնէ, յանգելով անվերջ անյատակ անդունդին: »

«Տո՛ւն թէ դժոխք, կը հարցնեմ ինքզինքիս ու կը տենչամ ոչինչով մը դայն հիմէն՝ օդը հանել ու թաղուիլ անոր փլատակներուն տակ, չիջնելու համար աւելի վար, անդունդին ճամբուն վրայ... »

Բայց Պատանութիւնն իսկ իր վերացական ամբողջութեանը մէջ չէ որ կ'երգէ պ. Թէքէեան, այլ այն մասնաւոր պատանութիւնը որ իրենն է, եւ որ իր յատուկ դրոշմ ունի, փափուկ, երկչոտ, ինքնամփոփ բայց եւ հեշտաւէր ու ջղուտ խառնուածքի մը դրոշմը, պ. Թէքէեան այն պատանիներէն չէ եղած որ հազիւ ոտքերնին կեանքի սևմին վրայ գրած, արդէն աշխարհիս տիրապետելու փառասիրութիւնովը կը գինովնան, կամ մարդկութեան հորիզոնը բնդայնելու, տիեզերքին խորհուրդը լուսաւորելու ճիգեր կը խիզախեն: Ինքը մարդկութիւնով շատ քիչ կը զբաղի, տիեզերքէն կը տեսնէ ինչ որ կը նմանի իր հոգիին այս կամ այն երեւոյթին, եւ ուրիշ բանի տիրապետել չ'ըզձար բայց եթէ Դեղնակութեան այն ցուրթին որով կը տառապի: «Մութին մէջ» ոտանաւորը որոշապէս կ'արտայայտէ այդ խպնոտ, համեստ, ինք իր երազներուն մէջ ամփոփուած հոգին:

«Մութին մէջ կ'ուզեմ որ կեանքս անցնի, Երազի մը պէս մեղմ ու կարճատեւ, Անձայն, անչըչուկ, ամենէն զազանի, Լայն ճամբուն մէջէն քայլով մը թեթեւ, Առանց ըստուերիս շղթային բռնի :

«Չեմ ուզեր տեսնել անողորմ երկնի Որոնք կը բացուին հոն՝ ժրպիտ իբրեւ՝ Ժրպիտներ իբրեւ մարդոց ձերուսը՝ Մութին մէջ :

«Ինչպէս որ ցըցուած վիզէ մը ծխանի Մութը ելլելով կ'երթայ յամրաթեւ ճնշիլ օդին մէջ եւ իրեն ետեւ Չըթողուր ոչ մէկ հետք յիշատակի, Այնպէ՛ս թող իմ կեանքս հալի՛, ամբողջի՛ Մութին մէջ : »

Մութը կը սիրէ, որովհետեւ ան զինքը կ'անջատէ անգիտակէն զոր կ'ապառնորովհետեւ զործող մը, կ'անուղ մը չէ, եւ մարդոց մը ջնասկոյտէն, որուն հետ դեռ կապ չունի, քանի որ չէ սկսած կեանքի պայքարը : Իր բոլոր երգերը՝ Մութին ներշնչուած շատ սիրուն են ատոր համար, որովհետեւ զգացուած են, եւ մասնաւոր հոգեկան վիճակի մը արտայայտիչ :

«Երբոր երկնքի վրայ Դիշերը կը ծաղկի՛, իր սեւ թաւիչէ անսահման թեւերով որոնց Գըզուանքներ ու Երազներ կը պահուըտին գոգին մէջ՝ ծաղիկ՝ որուն դեղին անէջները երկնքին կը զպին ու կը սարսուսան այդ բարձրութեանց մէջ անցնող զեփիւսներուն շուշէն :

«Այդ պահուն ճիշդ հոգեւ կ'իջնէ իր փողոսկրէ աշտարակէն եւ յամրօրէն կը սահի ճամբաներէ որոնք ինք բացաւ եւ ինք միայն կը ճանչնայ, հետապնդելով երազ մը իր օտեղծեց եւ որ խոյս կուտայ այդ պահուն իր առջեւէն :

«Ո՛վ անուշ ճամբորդութիւն անլոյս գիշեր մը քնացողներուն ներդաշնակ շուշին մէջէն եւ մեռելներուն վսեմ անշարժութեանը վերայէն :

«—Քանզի հազարաւորներ Մահը քարացուց այս գիշեր : —

«Ո՛վ պերճաւիան վայելքը հողիիս՝ առանձին եւ բազմաթիւ, բնութեան մէջը հալած՝ մինչեւ այն վայրկեանն ուր արեւին փայլուն մանդաղը կուգայ իր ցօղունէն հնձիկ Դիշերուան սեւ ծաղիկը որ կ'իջնայ նորէն երկրի անդունդներուն խորը : »

Բնութեան մէջ՝ պերճաշող, մեծաշունդ տեսարանները չեն որ զինքը կը զրաւեն. աստղացան երկնքին վահութիւնը, արեւուն զլեցանական մահը, լուսնին անսահման շնորհը

իր քնարը չեն սարսուացներ. աստղներն են որ կը յուզեն զինքը, կը ներշնչեն զինքը, աստղները, այսինքն ինչ որ կայ երկնքին մէջ ամենէն աւելի խուսափուկ ու երազային, լոյսը՝ որ հաղիւ շուշած՝ կը շտապէ թաղուիլ խաւարին ծոցը : Սիրոյ մէջ, տեսնէ որ աւելի թանկագին կ'երեւայ իրեն քան վայելումը :

«Մանիշակները թող երբեք չթօշնին, Թող նուագին զիս հմայող՝ չի գայ վերջ : Չը բըղբաթի արշալոյսին ծիրանին, Եւ տենչանքներն չը հասունանան սրտիս մէջ : ... Խընայէ՛ ինձ Յագեցումին անխընայ Խոնջէնքը դառն, ինձի, ով տէր, մի՛ թոյլ տար Բըռնել փազփուն երազիս գունար օճառ : »

Իր սիրոյ երգերը՝ մեծ մտնամբ՝ կ'նոջ հըրապոյրէն զրգովուած, անով օտաւապող, բայց եւ իր տանապանքն ինքն իր մէջ թաղելով կը ծոցող պատանիին յուզիչ եւ սքիճեց ջերթուածն են :

«Բազմութեան մէջ, սրտիս խորէն ցած, շատ ցած կը մըրմընջեմ անուսն անոր ու լերան վերայ, միշակ, դայն կը պոռամ գինովցած, Վախով, թեթեւ յանկարծ թըռչոյց մը նման :

... Անցաւ դնաց ու կը սպասեմ իր դարձին՝ Ինչպէս մոմ մը հովին դէմը զողալով ...

... Հիմա ցորենի խիտ արտի մը պէս՝ Երբոր Բրիկուան կը փըչէ զեփիւս՝ կը զողամ ամբողջ մարմինովս երբոր Հեռուէն կ'անցնիս : ...

... Կը հետեւիմ վախով թեթեւ քայլերուդ՝ Նըւագաւոր ինչպէս քնար մը որուն կը ճըմլէ սիրաբնարձագանքը անգու թ, Ս, գիպուածով դարձուր զըլուխը սիրուն եւ չըհատած ժողվէ աչքիս մէջ Սէրին Գանձը անհուն, գանձը չըքեղ, յորդահոս ...

Այս գիշեր թո՛ղ իմ տենչանքըս հարսի պէս Երաւրելով անգըրդի ներս քեւ խոցէդ, Ի՛նչացընող երգեր երգել եւ անտես՝ Աընարիդ շուրջ սըրբավառել խուսիկ ու ձէթ ...

«Խոստտ սէր» տիտղոսուած արձակ քերթուածը, — հատորին գոհարներէն մէկը, — այդ հոգեկան վիճակին ամենէն ամբողջական պատկերացումն է :

«Իմ սէրս ջինջ առուակ մըն է որ յուշիկ կը հօսի խոտերուն տակէն, Ընդարձակ դաշտին մէջ :

«Այնչափ յուշիկ որ ոչ իսկ իր զգչիւնը կը լսուի, եւ նո՛ւն որ քանի մը քայլ անդին կը պարտին անո՞յ գոյտ թիւնը չես գիտեր :

«Կը տենչամ որ անու թեթեւ քայլերդ պատահամաբ անոր մօտը բերեն քեզ եւ անոր

պայծառ ջուրերուն մէջ յանկարծ սրունքներդ թրջին՝ քանի որ անիկա, բնութենէն իր ճամբան զծուած, չպիտի կրնայ գալ ու քու ստեղծերդ համբուրել : »

Այս նօթը հնչեցնող դեռ բաւական թուով կտորներ կան հատորին մէջ, որոնց բոլորն ալ աւելորդ պիտի ըլլար յիշել աշտեղ . անոնց մէջ կարելի է տեսնել նաեւ մէկ քանի էջեր («Հօտաղ» , «Հովուերգութիւն») , որոնք «Հովուերգականքներու» Վերգիլին հեթանոսյո՞ գրմունքը կը յիշեցնեն :

Նոյն այդ զգայնիկի ոգին է որ ի յայտ կուգայ դարձեալ այն մէկ քանի քմայքներուն մէջ զոր պ. Թէքէեան յօրինած է բնական էակներու հոգին բացատրելու համար . Մանիշակը—սիրուն արձակ քերթուածի մը մէջ—իւր կեանքը կը պատմէ . կ'ըսէ իրեն՝ թէ ինքն ալ ատենով ուրիշ ծագիկներու պէս բարձրագլուխ կը կանգնէր , բայց հաճոյքն ունենալու համար հպումն զգալու իշխանուհիի մը որ եկաւ բուրաստանին մէջ ուր ինքը ծներ էր , որ մը վար իջաւ իր բարձունքէն եւ խոտերուն մէջ ծածկուեցաւ որպէս զի գեղուհիին ոտքերը անդիտակցաբար զինքը կոխոտէին .

... «Ինկա՛յ հողին վրայ , անբոյր գաճաճ խոտերուն քով ու անոնց հաւասար արմատներս նետեցի :

«Եւ առտու մը, ծածանուն ճերմակ պարեգօտով իշխանուհին , իր զանդաղ հեշտական պտոյտին մէջ , զիս իր թեթեւ ոտքերուն տակ մեղմօրէն կոխոտեց՝ մինչ ես այդ գգուանքին փոխարէն իմ հոգիս կուտայի :

«Առտուան զովութեան մէջ , իշխանուհին, վարմացած, ծծեց իմ անծանօթ բուրումնս եւ աչուրները թաղուեցան անուրջին խորը :

«Այդպէս ես իմ երազս գրկեցի , երջանիկ ու գոհ մութին մէջէն ծաւալեցնելուս սիրոյ խունկը որ կը հեշտացնէր վերը , յոյսին մէջ շարժող էակը ... »

Այս էջերէն դուրս որ այդ հոգեկան վիճակը կը թարգմանեն, պ. Թէքէեանի հատորին միւս հատուածները ուրիշ բան չեն բայց եթէ նրմանողութիւններ , երբեմն յաջողած , մերթ ալ անճարակ, ուրիշ հոգիներու, — մասնաւորապէս Պատէրի եւ Վերլէնի, — երգին : Այն էջերը որ արդէն կեանքը ճանչցած, սիրոյ բաժակը մինչեւ մրուրը քամած, ու զլուած , յոգնած , ճանճրացած մարդու խօսքեր կ'ըսեն , փոխ առնուած էջեր են , պ. Թէքէեանի բուն երգին հետ կապ չունեցող , մինչդեռ միւս էջերը՝ զոր վերլուծեցի՝ իր մտին ու արիւնին զաւակներն են եւ ատոր համար՝ գեղեցկագոյնները , կամ՝ աւելի ճիշդ՝ միակ գեղեցիկները :

Պ. Թէքէեանի հատորը կ'աւարտի վերջաբանով մը որ պատանեկան փուլին փակումը կը ծանուցանէ եւ անցքը առնական մտածումներու շեփորումին .

«Հիմա նման պարտիզպանին այն խոհեմ Որ կը հանէ անուներէն տունկերն հին՝ Անեղանակ , յոգնած սէրերս կը խըլիմ, Յարդարելու համար հողը նոր բերքին Սմաններուն , աչուններուն բարերար, Հոգուոյ քաղցին, 'ւ ուրիշներուն ալ համար :»

Դեռատի հողի մը ինքնարբէիւ երազանքներէն յետոյ : անոր ալ տեսչը հանրային կեանքովը բարախելու , իր ճայնը հաւաքական ցաւերուն ի նպատ դնելու՝ շատ հասկանալի է եւ շատ ազնիւ , մանաւանդ բանաստեղծի մը համար որ կը պատկանի ծայրայեղ դժբաղդութիւնով մը բեռնաւոր ազգի մը : Անշուշտ իմաստակ եւ անարդար պիտի ըլլար պահանջել ամէն քնարէ հանրային դորձը երգել եւ միմիայն, միշտ անով թրթռալ . ամէն հոգի իր ինքնութիւնը պէտք է ձգտի արտայայտել , եւ բանաստեղծութիւնը պէտք է ամէն բանէ առաջ անկեղծ ըլլայ եւ ինքնաբուխ , ու Օգտակարին չզոհէ երբեք Գեղեցիկը , որովհետեւ Գեղեցիկը ինքնին շատ բարձր տեսակէ օգտակարութիւն մըն է . բայց կարելի է պահանջել ամէն անհատէ, ինչ ալ ըլլայ իր խառնուածքը, որ անտարբեր չմնայ իր ազգին , ու ամբողջ մարդկութեան , որուն մէկ օղակն է ինքը, մեծ յուզումներուն . ամէն անհատ պարտաւոր է , իր չափովը եւ իր կրցած եղանակովը , հետաքերքըրուիլ հանրային դորձին , ու աջակցիլ անոր . փլուսկրէ աշտարակին մէջ կամ անձնական ցաւերու երգին մէջ կղզիացած մնալու յամառիւր ոչ միայն գատապարտելի է բարոյական տեսակէտով , այլ եւ գեղեցկագիտական տեսակէտով , որովհետեւ «ագեղ» է տեսնել հոգի մը, որ գեղեցկութիւն արտադրելու կարող, բարոյական յուզում ստեղծելու առակ ըլլալով հանդերձ , իր մտաւոր հնոցէն ոչ մէկ կայծ չի նետեր մարդկային պայքարին սրբազան վառարանին մէջ : Այսպէս, Շէնիէ , Ֆրանսայի ամենէն զմայլելի ու մաքուր արուեստագէտներէն մին, որ մինչդեռ վուլթերներն ու Թոլստօները Յեղափոխութիւնը կը պատ-

րաստէին, նոր Թէոկրիտի մը սրինգը հնչեցնելով կը շատանար, եւ ատով իր երկրին գեղեցկագիտական ճոխութիւնները բազմապատկողի շատ ազնիւ դերը կը կատարէր, ինքն իսկ ցնցուեցաւ հանրային կեանքին մրրիկէն, երբ Յեղափոխութիւնը գաղափարի վիճակէն իրականութեան վիճակին անցնել սկսաւ, մասնակցեցաւ, սրտով, գրչով ու գործով, հաւաքական պայքարին, եւ ի՞թէ տիւմար ու ոճը բաղորձ վճիռ մը զինքը տարածած չքացուցած չըլլար, փրանսացի Թէոկրիտը պիտի թողուր գործ մը որ զինքը երկրորդ Լուկրետիոս մը պիտի կացուցանէր եւ որուն նօթերն ու մէկ քանի գրուած հապուածները կը մնան միայն: Պ. Թէքէեան արդէն սկսած ալ է արտայայտել էջեր որ իր մտքին այդ նոր փուլին ազդեցութեանը արդիւնքն են. անոնց մէջ կան ինչպէս «Խարոյկը» որ «Անահիտ»ի մէջ հրատարակուեցաւ, ու մէկ քանի քերթուածներ «Ժող. համար»ին մէջ երեւցած, որոնք այդ զգացման արտայայտութիւնը յաջողած են հաշտեցնել բանաստեղծին խառնուածքին հետ. բայց եւ տեսանք պ. Թէքէեանէն հրապարակագրական յօդուածներ, որոնք ըստ իս՝ սխալ մըն են պ. Թէքէեանի կողմէ զործուած իր տաղանդին ու իր խառնուածքին դէմ, եւ ճիշդ ատոր համար՝ թոյլ, եւ իրեն անարժան: Շէնիէ, սրինգին տեղ Լուկրետիոսի պղնձէ քընարն առնելով, իր հոգիէն բոլորովին չէր հեռանար, — ինչպէս ըրած պիտի ըլլար և՛ թէ վոլթէրի քրքիջը փորձէր հնչեցնել. — ի ծնէ «գասական» ու ամէն բանէ առաջ «արուեստագէտ» իր բնութեանը միշտ հաւատարիմ կը մնար՝ գասական ստեղծաշարին մէկ խաղէն միւսին անցնելով, կամ, աւելի ճիշդ, երկու խաղերը փոխն ի փոխ հնչեցնելով այլեւս: Պ. Թէքէեան իր բնաշրջութեանը յառաջխաղացումին մէջ, լաւագոյն օրինակ մը չի կրնար ունենալ քան Շէնիէն:

Չեւը պ. Թէքէեանին հատորին մէջ շատ խրնամուած է, երբեմն՝ նոյն իսկ շափաղանց նրբամուր. բայց այն հատուածներն ուր արուեստականութիւն կը զգացուի, գրքին նմանողական բաժնին կը պատկանին. պ. Թէքէեանի անձնական գրոյմը կրող էջերը վճիռ են ու պարզ: Մերթ սակայն, այդ պարզութիւնը տղայականութեան կը հասնի, եւ այն ատեն քերթուածը լարալիսեան արտադրութեան մը ձեւը կ'առնէ, ինչպէս «Գիւտ»ը, որ պարզա-

պէս ծիծաղելի է եւ բնաւ պէտք չէր տեղ ունենար այդ հատորին մէջ:

«Քեզ սիրելէս ի վեր ամէն օր նոր գիւտ մը կ'ընեմ: Գիտէի՞ր թէ ինչու քեզ կը սիրեմ. — Անոր համար չէ՛ որ ամենէն գեղեցիկ ես, այլ անոր համար որ քու գեղեցկութիւնդ ես ամենէն աւելի կը սիրեմ:

Եւ քու գեղեցկութիւնդ ամենէն աւելի կը սիրեմ այն օրէն ի վեր ուր տեսայ քեզ:»

Կան ալ կտորներ որոնց թոնի աններգաշնակութիւնը կը վնասէ ամբողջութեան կատարելութեանը. այսպէս, «Հովուերգութիւն»ը որ Վերգիլեան ոճով մը պէտք էր գրուած ըլլար ամբողջ եւ կը ձգտի ալ այդպէս ըլլալու, Մորասանական այժմեանաշունչ բացատրութիւններով կ'եղծուի («սկսան աւելի որոշ անտեղ իրենց մեջը», «լուսինը, նախ՝ ոսկի կէտ, յետոյ մահիկ, երեւցաւ բլուրին ետեւէն, կէս սկաւառակ՝ զծուեցաւ երկնքին վրայ, եւն») : Մերթ ալ քերթուածին քնարերգական ազնուութիւնը կ'ապականուի արձակունակ տափակութիւններով որոնք իմաստը զօրացնելու արդարացումն ալ չունին, այսպէս, «Ծնորք»ին սա տողերը.

«Երազը անդունդ մըն է
Որուն խորը նայելով
Ամենէն ամուր խառնուածքները
Գլխու պըտոյտէ կը բռնուին:»

Կան պատկերներ որ տգեղ են եւ անյարմար «Ինչպէս տգրուկ մը սրուակի մէջ թեթե՛ Սէրս կը կծկի, կը պղտիկնայ կ'իջնէ վար...
... Իմ մարմինիս թաց ըսպունդէն
Քամուած կեանքը երբոր ցամքի...»

Եւ էջեր, որ կ'երգեն շատ հասարակ, զաւելտական ըլլալու շափ ուսմիկ կեանքի պարագաներ, առանց անոնց տալու բանաստեղծական ազնուացման մը բարձրացնող խորհրդանշանական լայնութիւնը. այսպէս՝ այն քերթուածը ուր պ. Թէքէեան կը յայտնէ ձանձրոյթը պարոնին որ կը սպասէ փողոցին մէջ իր սիրուհիին որ չի գար...

«Կը դիտէ հեռուն, պահ մը կը խոկայ,
Ու կը շրմընջէ. «Գիտեմ, չպիտի գայ»...»

Վերջապէս չեմ կրնար ինքզինքս արգիլել պ. Թէքէեանին մեղադրելէ նարկիսի հին աղւոր այլաբանութիւնը խաթարած ըլլալը: Յոյները ջրերու եզրը բուսնող նարկիզ ծաղկին ծնունդը բանաստեղծօրէն բացատրելու համար երեւակայած էին գողտրիկ պատմու-

Թիւնը Նարկիս զեղանի պատանւոյն որ , կե-
 փիս գետին որդին էր , եւ արհամարհելով ըտոր
 աղջիկները որ իրեն համար կը հառաչէին ,
 գետի մը մէջ իր պատկերը տեսնելով ինք ի-
 րեն սիրահարեցաւ , ու իր դէմքին հայեցո-
 ղու թեանը մէջ անշարժացած , հողին գամուե-
 ցաւ ծաղկի փոխուած , ծաղկի մը որ իր պատ-
 կերը ջրին մէջ դիտելով յամբօրէն կը թօշնի :

Պ. Թէքէեանի Նարկիսը պատանի մըն է որ
 սիրով կը տառապի եւ որ , մերժուած , բայց իր
 սիրածին պատկերն իր մէջ ծած ու հուսկ ա-
 պա նոյնացած անոր հետ , օր մը ջրի մը վրայ
 հակելով իր դէմքը դիտած ատեն կը կարծէ իր
 սիրականին դէմքը տեսնել եւ զայն դիտելով
 կը հիւժուի ու մեռած կ'իյնայ ջրերուն վրայ :
 Հին հեքիաթ մը անշուշտ կարելի է նորոգել ,
 ընդլայնել . փոփոխել , բայց պայմանաւ որ ա-
 նոր ոգին չեղծուի , եւ թէ փոփոխութիւնները
 նոր գեղեցիկութիւն մը աւելցնեն աւանդական
 պատկերին . պ թէքէեանի քմայքը բնաւ չէ
 պահած յունական հէքիաթին իմաստը , որ , այդ
 նոր ձեւին մէջ , քաշկրտուկ է , անբնական եւ
 պաղ :

Պ. Թէքէեանի արձակը լաւագոյն է քան ու-
 տանաւորը , որ , թէպէտ շատ սիրուն տողեր ու-
 նի , ընդհանրապէս ոտանաւորի վերածուած
 արձակի տպաւորութիւնը կը թողու :

Կեզու , զոր պ թէքէեան կը գործածէ , մա-
 քուր ու կոկիկ աշխարհաբար մըն է . եւ որ
 հայկական գրոյթ կ'է կրէ , թէպէտ դուրի չէ ան-
 ճա՛հ եւ չհալած Ֆրանսաբանութիւններէ , ինչ-
 պէս եւ քերականական մէկ քանի տձեւու-
 թիւններէ («Արթնութիւնը իր» , փոխանակ «Իր
 արթնութիւնը» ի , «օղակներու մէջ իր» , փո-
 խանակ «Իր օղակներուն մէջ» ի) :

Ոտանաւորներուն տաղաչափութիւնը , բացի
 իրենց չափազանց արձակածեւ ընթացքէն , որ
 կրնայ յարմարել վիպոճական քերթուածներու
 բայց ոչ քնարերգական բանաստեղծութեան ,
 կը ներկայացնեն մէկ քանի կանոնադանցու-
 թիւններ . տողերուն հատածները յաճախ
 անշեշտ վանկով մը (ըն , ըդ , ը , ըն) վերջացած
 բառերու վրայ կ'իյնան , սխալ մը զոր ուսա-
 հայ բանաստեղծները կանոնի կարգ անցու-
 ցած են , եւ զոր սակայն աններելի է պահ-
 պանել՝ մանուսանդ նուրբ ու բարձր բանաս-
 տեղծութեան մէջ (1) : Իմանապէս կը նկատուին

(1) Ռուսահայ բանաստեղծները թերեւս ի-
 րենք զիրենք կ'արդարացնեն անարկելով թէ

հոն բաղաձայնի խճուղումներ որ սնդն անրն-
 թեռնելի կը դարձընեն (կ'երթայ՝ քաղուած/ն
 գեհնի փոշին համբուրող . «քաղուածքն») ին նէն
 յետոյ եկող բառը պէտք էր ձայնաւորով սկըս-
 սէր , որպէս զի տողը իրապէս տասնմէկ վանկ
 ունենար , մինչդեռ հոս տասներկու վանկ ու-
 նի , նոյնպէս «ճառագայթումն յուսաշող» , «ա-
 նոր աճիւնն քաղցրահոս» , «մարդուն յոյսերն
 եւ բաղձանքներն , սեռերու» , եւն) , կը նկատ-
 ուին նաեւ նման վանկերու զուգարութեան
 յառաջ եկած խժուրթիւններ («հոգիս այսպէս
 զարկը կըրեց շնորհքիդ» , «սրտիդ պարտէզին
 մէջը ջըրիւսաւ») :

ԱՏՈՄ ԵՍՐԾԱՆԵԱՆ , «ԴԻԻՃԱՉԵՕՐԷՆ»

Գերթուածներու այս եօթնեակը պատանե-
 կան հոգիի երգ մըն է դարձեալ , ինչպէս պ
 թէքէեանի հատորը , բայց մինչդեռ օճէեանի
 եսական ու հնչաական լարը կը հնչեցնէ ,
 Եարձանեան հաւաքական զղացմանց թարգ-
 ման կը հանդիսանայ եւ պայքարի նուազը կը
 թնդացնէ : Խորքին մէջ , երկու բանաստեղծ-
 ները եղբայր են , երկուքն ալ արտայայտիչ
 այն տարիքին ուր մարդ կեանքը դեռ չէ ամ-
 բարած , բայց կ'երգէ զայն այնպէս ինչպէս պի-
 աի ուզէր իր երազին մէջէն զայն պարած
 ըլլալ : Իրարմէ տարբեր են խանութեան ու
 ձեւով . Թէքէեան կանացի խանդաղատնքնե-
 րուն բանաստեղծն է , եւ՝ թէպէտ նորութեան
 ջերմօրէն հակամէտ՝ իր ձեւը գասական չա-
 փասիրութեան յստակ ձգտումով մը կը քնն-
 րոշուի . Եարձանեան առնական խիզարուն-
 թեանց փողարն է , եւ իր ձեւը կը շնայէ դէպ
 ի վերջնական նորութիւնը , զէպ ի բացարձակ
 անսանձութիւնը :

Ոտանաւոր ու արձակ գրութիւնները զոր
 Եարձանեան հրատարակած էր արտասահմանի
 մէկ քանի թերթերուն մէջ՝ այս հատորին
 լոյս տեսնելէն առաջ , ի յայտ բերած էին

աշուղներու երգերուն մէջ հատածները յա-
 ճախ ըով կ'աւարտին . բայց ատի արդարա-
 ցում մը չի կրնար համարուիլ . աշուղներուն
 երգերէն պէտք է քաղել միայն ինչ որ գեղե-
 ցիկ է , եւ ոչ թէ անոնցմէ փոխ տունել հայ-
 կական տաղաչափութեան ամենէն հիմնական
 կանոններէն մէկուն զէմ մեղանշում մը , կա-
 նոնազանցութիւն մը , որ տողը կաղ , աններ-
 ղաչնակ եւ զանգաղ կը դարձընէ :

Չգրուած ու հուրք արուեստագէտ մը , որուն մէջ սակայն հզօր ու որոշ ինքնութիւն մը կը պակսէր տակաւին . այդ առաջին շրջանի բոլոր արտագրութեանց մէջ Մեթերլինքի եւ վերհարընի ազդեցութիւնը ծայրայեղօրէն տիրակալն էր . այս հատորին մէջ , Եաթնամեան իվեր կը հանէ ներշնչում մը բացարձակապէս անձնական , եւ իր արտայայտութեան ձեւին մէջ է միայն որ իր եղբոր սիրած վարպետները կը շարունակեն պահել իրենց խորունկ գրոջը :

Եարձանեան կ'երգէ սրբազան յուզումը զոր բռնութեան դէմ ցցուող հայ բնորդումը կ'ազդէ մտաւորական երազանքներու մէջ զինովիցած բայց եւ գործել չկրցած ըլլալէն տառապող իր վրդոված պատանի հողիին : Եւ չեմ գիտեր բան մը աւելի սրտաշարժ քան այս հիացական ու ցաւատանջ կարկառումը երազող հոգւոյն դէպ ի Գործին դժնդակ արօրին լծուած արիւնոտ եղբայրներուն գիւցազնական սաժանքը :

Առաջին քերթուածին մէջ , անոնք , Գործողները , « հակայածեւ ոահվիրաները մարմարիզէն Յոյսին , ըմբոստացումներու ապառաժներէն իրենց ճակատներն արիւնած . . . » կը հրաւիրեն զինքը , Երազողը , միանալու իրենց մտայն ու եղբրական կարաւանին :

« Աւ վայրկեան մը մթաստուերին մէջէն , եթէ կրնաս , անհունօրէն ետիդ դարձիր , Աւ աես մեռելներուն հողէն ժայթքումն յանկարծական

Որ գերեզմաններուն ու քանդուած քաղաքներուն տակէն , Մէկէն ի մէկ փրկութեան սգումներէն շնչուտուրուած՝ Մեր ետեւէն , այս իրիկուն , տենդոտօրէն ոտքի Դէպ ի Յոյսին բացաստանները պիտի քալեն : Աւ անոնց հաւատքին հրայրքը նայէ ու սիրտ ա՛ն :

Տե՛ս իրենց ծանր քարերն ու սեւ խաչերը փայտէ շողէն յողմած ուսերնուն վրայ , Տե՛ս իրենց պատանքներն իրարու արիւնէ կարմիր՝

Սաւառներու հովերուն տարածած , Աւ տե՛ս , տե՛ս , ըտլորն ալ մէկ մէկու առջեւ կարծես թէ ծնրադիր տե՛ս , Իրարու համար անգամ մըն ալ մեռնելու երգումներ կ'ընեն . . . :

« Աւ ամենքն ալ հոն պիտի ըլլան , այսօր , մեզի հետ , Անոնք որ կոյր են ու անոնք որ անկար , Աւ անոնք որ իրենց վիզերը խելայեղօրէն

Մէկ մէկու հոգիի համար Դէպ ի եղբայր երկարեցին . . . :

Աւ անոնք ալ որ մեր վարպետներն եղան ընդվզումի , Որոնց խօսքերը մեր խօսքերն են , այս իրիկուն ,

Աւ իրենց հոգին մեր պաշտամունքը թու յաւէտ : Աւ տակաւին ամբոխը կայ անոնց՝ որոնց սարսափին ազէկ որ չընդհարեցար զուն , Միայն մենք գիտենք թէ անոնց մարմինները ո՞րչափ ամեն ի են ,

Աւ իրենց աչուրներն ու շարժումները ո՞րչափ անարկու : Աւ այն արիւնը որ եղբայրներու գլխատուակն իրենց մտքովը ըմպեցին Օ՛ , անոնց գանկերուն մէջ՝ յաղթանակներու ծարաւէն գինով արծիւներու

Անսահման թեւաբաղխումները բացաւ . . . : « Աւ դեռ մայրերը կան , արդատարեր ու հերարձակ ,

Որ վերը վրաններուն մէջը դաշտավայրին , Իցենց յուռթի ու լուսաւոր ու լայն կտրերուն տակ , Մեր վաղորդայնները նորէն փառաւորելու համար

Մուկզին դիւցազներու կարմիր երկունքը կ'ապրին . . . : Իայց հիմա որ առաւօտը պայծասօրէն մօտեցաւ ,

Աւ գուն մեր հոգիները ճանչցար , Ո՛վ երազելէն ոգիւարող եղբայր , Եկո՛ւր , որպէսզի մեր շրթունքները քու շրթունքները ընդունին

Վայրկեանի մը ու յաւիտենականութեան մը համար . . . : Աւ դեռ պրիւնին նուիրական պղծումէն չկարմրած՝

Սա՛ փայլակէ սուրը կարծօրէն ձեռքդ ա՛ն , Աւ անով մեր ամենուն սուրերը սա՛՛ աստղերուն կարմրութեանը տակ , Երգումներուն երգումը ընելէն խաչածեւէ՛ . . .

Աւ դէթ անգամի մը համար՝ ինքիրմէդ զուրս գահավիժելէն՝ Եթէ կրնաս , մեզի հետ քալէ : Ահաւասի՛կ Ճամբան : »

Երկրորդ քերթուածին մէջ կը տեսնենք Երազողը որ կը պատասխանէ հրաւերին , կ'ընկերանայ՝ հոգւով՝ կուռուղներուն գումարտակին , եւ կ'երգէ փոռք անոնց որ « կործանումի ու փրկութեան ճգնաժամներուն , — շղթայագերծումներու անազանցերը հնչեցուցին , — պատնէշներէն պատնէշները ու , անհղապէս , աշտարակէ աշտարակ , — ու բանտերէն , բերդերէն ու թխարաններէն անդին , — Դէպ ի քաղաքները ստրկութեան : »

Երբորդ քերթուածին մէջ, Երազողը, որ պայ-
քարողներուն հետ, առաւօտին մէջէն, ընդ-
վզումին գառիվերը կը մագլցի, կը լսէ ընդ-
երկրեայ ձայնը անոնց որ Գործին համար մե-
ռան, բայց որոնց ստուերները միշտ ակնդէտ
կը հետեւին իրենց ճիզը շարունակողներուն
քաղցր ստնածայնին:

«Մենք մեռելներս ձեզի հետ ենք այս առա-
ւօտ,
Այլեւս մեր բազուկի ոսկորներուն ճարճա-
տիւնները, գիտե՛նք, գիււային,
Սրունքններնուս երկայնքն ի վար ու ձեր ա-
կանջին,

Մահազուժօրէն պիտի հնչեն...
Քանզի, մեր կմախքները՝ ալ դադաղներէն ու
աւերակներէն դուրս,
Սա՛ ծաղիկներուն նման, վերէն յորդող լոյ-
սերուն սակ,
Օ՛, աւետի՛ս ձեզի, ալ կը սկսին պայծառօրէն
մաւորուիլ...»

«Ու նորէն մեր այսչափ ատեն,
Խաւարով ու հողով ու յուսահատութիւնով
լիւիւցուն

կոպերնուս տակը, այս պահուն,
Մեր նայուածքները լիճերու նման կը բացուին
Ու մեր խեղճ շրթունքները մահէն տրորուած,
Օ՛, գթացէ՛ք, մայրականօրէն, ձեր հրավառ ճա-
կատներուն զէտք ունին...»

Բայց մեռելներուն կազդուրիչ կոչին հետ,
Երազողը կը լսէ եւ անսպառ ժայթքումը մայ-
րերուն արգանդին որ վաղուան հերոսները
կը սփեղջազործէ՝ գործին անընդհատական
յառաջխաղացութեանը համար:

«Ո՛ւ ես...» Տեսայ որ, բերբաւոր ու բերբաւոր
ճննդարեր մայրերը սեւահեր
Իրենց նորածին զաւակները ձեռքերնուն մէջ
ու խելայեղօրէն դէպ ի վե՛ր
Արիւնտաւ չորիզոններուն ամբարձուցին,
Չանոնք առաւօտին ճառագայթներուն խորը
մխրճելով,
Յաւիտենականօրէն մկրտելու համար...»

Չորրորդ քերթուածը կը պատկերացնէ Բաղ-
խումը. եւ հոտ, Պայքարին պայթումէն առաջ
Երազողը կ'երգէ յառնումը, անհունօրէն յու-
զիչ, հին պայքարներու հերոսի մը, վաղնջա-
կան հայ քաջի մը ուրուականին, որ թունդ
եղած իր զաւակներուն գերութեան ծոցին
վերակենդանացումէն, կուգայ օրհնել զանոնք
եւ սրտապնդել:

«Ու երբ լուսինը եղերականօրէն դէպ ի եր-
կինք կը բարձրանար,
Խաւարներուն անդունդները իր հրդեհներն
անտառելէն՝
Յանկարծ՝ հորիզոնին վրայ, Ուրուական մը,
Թերեւս արքայ մը՝ մեր հին փառքի օրերէն
Որ հողէն յառնած ըլլալու տարօրինակ երե-
ւոյթն ունէր,
Իր խոյրը ձեռքը՝ գրահը արեգակը նման կուրծ-
քին՝

Ու իր վահանը ամբոխին դիմացը բռնելէն,
կոյր աստուածի մը հանդիսաւորութեանը հա-
մեմատ, ծանրադէմ, ըսաւ:

«Չաւակնե՛ր, նախ սպասեցէք որ սա՛ աչուը-
ներուս մէջէն, դարերէ ի վեր,
Գերեզմաններէն լեցուած դեղին հողը վար
թափելէն ձեզ խօսիմ...»

«Ու անասի՛կ, ձեր հոգիները կը ճանչնամ ձեր
ճակատներուն բոցէն,
Ու ցեղիս արիւնին ձեր մէջ եռալը երջանկօ-
րէն մտիկ ըրի...»

Գիտեմ ձեր Յաւը որուն մոլեգին ծնունդն է
ձեր ըմբոստացումն այսօրուան...
Իմացայ, գլուխս ձեռքերուս մէջ ու դադաղիս
տախտակներուն արմնկած,
Իմացայ բոլոր ճիչերն ու հծծիւնները Անմեղ-
ներու անագորոյն կոտորածին...
Ու սերունդներուս սրտերէն հոսած արիւնը
կրակէ,
Աւա՛ղ, հողին մէջէն սուզուելով իջա՛ւ, եկա՛ւ,
իմ խեղճ ճակատըս թրջելու...»

«Բայց արչաւելէ առաջ, նախ՝ հորիզոններէն
առաքաստեցէ՛ք
Սա՛ դրօշը՝ որ Դրօշը եղաւ մեր հայրերու
Յաղթանակին,
Ու ձեր քայլերը շտապելու ու հոգիսիդ փո-
թորկելու համար,
Պայծառափողիս ունկնդրեցէ՛ք որ շունչիս մէ-
ջէն մեր վրէժը պիտի հնչէ...»

Եւ այն ատեն, նոյն իսկ կոխն է որ կը
տեսնէ, կ'երգէ Երազողը, կռիւը որ իր աւիւ-
նով արբշիւ երեւակայութեանը մէջէն, ար-
դէն կ'երեւայ վերջնական յաղթանակին ծի-
րանիովը պսակուած:

«Նյայէս մեր արհաւիրքի ամբոխները կամքի
զօրաւորներուն,
Պղնձէ ու կապաթէ աննուաճելի Դուռներն եզան
Որոնց դիմաց Եղեոնը իր մարմինը բաղիւնէն
պարտասած՝
Օր մը վախճանական անկումի շարաշուք օր,
Իր ձեռուըներովն իր ոսկրակոյտերը քաղաք»

Մեր փառքի պատուանդանին տակը ահաւոր ,
Գերիարար ծունկի եկած՝ կնդրուկի տեղ հըր-
կիղեց . . . »

Հինգերորդ քերթուածին մէջ , Երազողը
կ'երգէ ազնիւ խղճի-խայթը որ պիտի ցցուի
կռուողներուն սրտին մէջ , երբ , Յաղթանակին
վաղորդայնը , մաածեն թէ իրենք : աղատու-
թեան եւ եղբայրութեան զինուորները , ստի-
պուեցան կեանքեր փշրել՝ իրենց իտէալն ի-
րագործել կարենալու համար . ձայն մը , « դա-
րեւանդին վրայ » , կ'ըսէ գուպարայաղթ ամբո-
խին .

« . . . Ինծի հետեւեցէք զէպ ի քաւութիւնը սա
մըրկոտ ջուրին՝
Որ աւա՛ղ , մեր հայրերուն զիակներովը բեռ-
նաւորուած ,
Իր արհաւիրքէն զանոնք այնչափ ատեն սա
ապտոածներուն զիմացը կը փշրէր . . .
Եկէ՛ք ձեր արիւնտո գաստակներն հուժկու ,
Իմ արիւնտո գաստակներու հետ ,
Անոր սրբադործող ալիքներուն մէջը մաքրելու
Քանզի , այն իտէալը՝ զոր մեր երիտասարդի
մտածումը պայծառ
Մեր դարաւոր Հողին համար սրբօրէն քան-
դակեց ,
Երբե՛ք , եւ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի ,
Այլեւս ո՛չ յաղթանակներու ազատարեր սու-
րերուն ,
Ու ո՛չ արիւնին ահագնութեանը պէտք ունի »

Այն ատեն , ա՛լ անպէտ համարելով ի-
րենց ձեռքը ծանրարեանեալ պահել մահու գոր-
ծիքովը , պայքարողները մէկզի կը նետեն ի-
րենց սուրերը .

« . . . Ու մեր ձեռքերէն խելայեղաբար արձա-
կուած սուրերը բիւրաւոր-
Հեռաւոր հողին վրայ շանթերու պէս յանկար-
ծօրէն խորասուզուեցան : »

Վեցերորդ քերթուածին մէջ , մայրերուն
անուշ տեսիլքն է որ կը վերերեւայ , այս ան-
գամ ոչ թէ գիւցազներ յղացող իրենց պող-
պատէ արգանդը առաւօտին մէջ շողացնելու ,
այլ կռիւէն յաղթական դարձող իրենց
զաւակներն օրհնելու եւ դարնկպսակելու հա-
մար .

« . . . Յանկարձ՝ լայն ու արգաւանդ առաւօտի մը
նման մեր մայրերուն ծագումը յայտնուեցաւ ,
Որոնք սնուցանող կուրծքերնին իրենց քօ-
ղերէն մերկացուցած՝
Արմաւենիի ոստերով բեռնաւոր , ձակատներ-
նուս համար ,

Մեր սպասումէն գինով ու մեր կարօտէն
արբշխու , երգեցին . —
Չաւակնի՛ր , նախ մեզի մօտեցէք , վասն զի գի-
տենք որ ,

Ձեր յոգնած ու խոտովեալ ու իմաստուն
ձակատներն ազատարեր հերոսի ,
Այլեւս հիմա մեր մայրական լուսեղէն ծոցերուն
Հանդէսեցնող քաղցրութեանը պէտք ունին . . . »

Եօթերորդ քերթուածը , որ հատորը կը փա-
կէ , Պայքարին վերսկսումը , Ոգորումին յա-
ւերժութիւնը կ'երգէ : Հիմա որ բռնութիւնը
խորատակեցին , կռուողները դարձեալ ճամբայ
կ'ելլին զէպ ի նոր Գործը — որովհետեւ Գոր-
ծը անվսխճան է — զէպ ի Գործը « Արգարու-
թեան , Եղբայրութեան եւ Հոյսի կրանիտէ
անվկանգ եւ յաւիտենական մտաններուն
հիմնաքարերը անընկճելիօրէն կրելու » :

Ամբողջ հատորը տոգորուած է մեծ ազնու-
ութեամբ ներշնչումով մը , եւ ձեւը կը լու-
սաւորուի հուժկու պատկերներով որոնք եր-
բեմն վեհաաներուն անսահման պատկերները
կը յիշեցնեն : « Իւրեցազնօրէն » ը ամենէն հզօր
տեսիլքներէն մին է զոր հայ միտք մը յղա-
ցած ու պղնձի մէջ քանդակած ըլլայ :

Յղացումը ամբողջական է եւ ներդաշնակ ,
բայց արտայայտութիւնը կը դադրէ երբեմն
յղացումին վեհութեանը համազօր միալէ .
ոճը , խորտո գեղեցկութիւններու մօտ , ունի
նաեւ՝ տեղ տեղ՝ տափակութիւններ կամ բըռ-
նաղբօսութիւններ . երգին հրեղէն խոյանքը
մերթ կ'ընդհատուի ու կը պաղի փաստաբա-
նական պերճախօսութեանէ կարծես քաղուած
սապէս սողերով՝ « Ու յետոյ , ու մանաւանդ ,
ըլլալու համար Ան որ պէտք է ըլլալ վերջա-
պէս » . մերթ ալ պատկերը զօրութեան դա-
պթնակէտին հասցնելու ձգտումը , անճիշդ գա-
ռիթափիմը վրայէն սահելով , ծիծաղելիութեան
մէջ կը սայթաքի , ինչպէս երբ Եարճանեան
ցոյց կուտայ իր հերոսները որ իրենց գանա-
կը , փոխանակ թշնամուոյն կուրծքը միտելով
շատանալու , « ախաներնուն փակ կը տրորեն » (?)
եւ նոյն իսկ , « սիրք » ի թուրկլլողներու պէս ,
« իրենց պողպատէ սուրերը փայլակներու
նման կը լափեն » (?) : Տեղ մը պ. Եարճանեան
« ողջակիզումներու ուխտուած սպիտակ (ինչո՞ւ
« սպիտակ ») տղայ » անուանել կուտայ ինք-
զինքը « մարմարեղէն Յոյսին հակայածեւ ուս-
վիրաներուն » կողմէն . ուրիշ տեղ մըն ալ
ինքզինքը « կրանիտէ աշտարակի » մը կը նման-
ցնէ .

«Ու ես բլուրներուն վերէն ու դաշտավայրին վրայ Սնանամանորէն ոտքի, ինչպէս աշտարակ մը կրանքտէ...»

Եւ ասի անխուսափելիօրէն թօժափ է, որովհետեւ դժուար է ըմբռնել թէ ինչո՞ւ պ. Եարճանեան այդ հսկայ երեւոյթը կ'ընծայէ ինքզինքին: Աններդաշնակութեան տարր մը կը ներկայացնէ վերջապէս այն ծայրայեղ ահեակ մեմատականութիւնը որ երբեմն դուրս կը ցատքէ բանաստեղծին պատկերացումին եւ Իրականութեան միջեւ. եւ հոս պակասութիւնը ձեւին մէջ չէ միայն, այլ եւ յղացումին մէջ. բանաստեղծը իր հերոսներուն ճիգը յազմանակով արդէն պսակուած կը տեսնէ. եւ այդ եւրագուած ապագային նախատեսիլքը դեղեցիկ է, բայց տարապայման զօրութիւնը զոր Եարճանեան կ'ընծայէ իր կուռոյններուն, հոմերական արդուզարդը զոր անոնց կուտայ, ծայրայեղ աքաղութիւնը որով զանոնք մաքառումէն լազմանակին կը հասցնէ, տարօրինակէն անհանգոյն ըլլալով հայ ընդվզումին իրական պատկերին, անախորժ տպաւորութիւն մը կը թողուն. հայ կուռոյնները, Եարճանեանի քերթուածին մէջ, «կարմիր քղամիջինքով անհունօրէն փաթթուած են», ու «նազմադաշար նկատելու համար՝ իրենց խօլական կրիվարները թշնամիին բեկորներուն վրայ փոթորկոտօրէն ու քառաբշար բոլորը մէկ արձակելէ յետոյ, դարաւանդի մը դազաթը կը բարձրանան...» արդ, գիտենք, աւա՞ղ, որ մեր մաքառողները ոչ քղամիջ ունին, ոչ կրիվար, ու հեռու են «թշնամիին բեկորները զարեւանդի մը կատարէն դիտելու» հաճօյքին մօտեցած ըլլալէ: Հազիւ հարուած, հազիւ զինուած, ցաւազինօրէն սակաւքթիւ՝ ջարդուողներու, սահմրկածներու, փախչողներու, լացողներու ամբօրի մը մէջ, տիեզերական վատութիւնովը պաշարուած, գոքերնուն տակ ու գլուխներնուն վերեւ ունենալով իր փտութեանը մէջ դեռ շատ հղօք բռնութեան մը որոգայթներն, արցաններն ու լախտերը, անոնք, — իրական հերոսները հայ ընդվզումին, — կը քաշկրտուին հէլ ի հել, խելայեղ, զանազակոտ, կատաղութիւնով ու յուսահացութիւնով ալ գինով, մութի մէջ, մտախտեղի մէջ անձայն գալարուող խոնարհ ու տաժանելի ողորումներով: Ու խորտուրտ, փուշերով ցցուած, վիհերով պատռտուած, ու երկայն, երկա՛յն է ձամբան որմէ ատոնք կը քալեն եւ որմէ պիտի

քալեն ո՛վ գիտէ զեռ որքան ատեն՝ մինչեւ հանդրուանը հասնելը: Եարճանեանի երգը շատ աւելի յուզիչ պէտք ըլլար այդ մասին մէջ, որ քլիննէն տկարն է հատորին՝ ըլլալով ամենէն ակազեմականը, եթէ ան մեզի պատկերացնէր ոչ թէ անգոյ «ճակատամարտը», այլ խեղճօրէն վսեմ մաքառումը, երկարաձիգ ու աղջամղջին պայքարը այդ մեհաուորիկ կուռոյններուն որ, կրանքտէ լեռներու կատարը բարձրանալէ հեռու, ամբողջ երկաթէ լեռներ կը կրեն ուսերնուն վրայ՝ ճգնելով զանոնք իրենց ցաւոտ մկանունքին ուժովը միայն հորիզոնէն անդին նետել, անոնց մահաբեր ստուերէն ազատելու համար դժբաղդ հովիտները:

Եարճանեանի լեզուն ստողը եւ հարուստ աչքարհարար մըն է, ուրից սակայն պիտի բազճայի որ վտարուած ըլլային կարգ մը պոռոտ ֆրանսաբանութիւններ («քայլիդ վրայ նորէն վերագա՞ծիր») ու քերականական խորթ ձեւեր («գիտես որ պէտք է բազխուիլ անկէ»), ինչպէս եւ ծայրայեղ գործածութիւնը մակբայածեւ վերագիրներուն (անխոնջօ՞ւն, յանկարծօրէն, տենդոտօրէն, եւն), որոնք շատ աւելի բազմաթիւ են Եարճանեանի իւրաքանչիւր քերթուածին մէջ՝ քան Վերնարընի ամբողջ հատորի մը մէջ:

«Ինչեղանօրէն»ը, թէպէտ ոտանաւորի ձեւով տպուած, ու եւ է տաղաչափական կանոնաւորութենէ զուրկ է, եւ արհնչութիւն չունի Վերնարընին, Հանրի տը Ռենեիէի, Վիելէ-Կրիֆենին «ազատ ոտանաւոր»ին հետ որ որոշ կըշուութիւն մը կը պահէ եւ յանգը բոլորովին չի վտարեր. Եարճանեանի քերթուածները աւելի կը յիշեցնեն Մեթերլինքի մէկ քանի հատուածները. — ինչպէս «Հիւանդանոցը», — որոնք հրդեցիկ արձակ են քան տաղաչափեալ բանաստեղծութիւն:

«ՄՈՒՐՃ»

«Մուրճ»ը միակ հայ թերթը եղաւ որ գերագատական մը նախընտրեց «Մատենադարան Սնանիտ»ի երկու հատորներուն, որոնց հանդէպ արտասահմանի բովանդակ հայ մամուլը — բաց ի «Հանդէս Ամսօրեայ»էն — այնքան ազնիւ որբան ուշիտ լուսութիւն մը պահեց: «Մուրճ»ի յայտնած դատումներուն մէջ կան սակայն մէկ քանի կէտեր որոնք խորապէս անճիշտ են:

Պ. Լեւոն Սարգսեան հետեւեալը կը գրէր «Յպիկուրի պարտէզ» ին համար .

«Անտու Ֆրանսի (Յպիկուրի պարտէզ) ին մէջ հատուածները այնպիսի տպաւորութիւն են թողնում, որ կարծես դուք յանկարծ մտել էք Ֆրանսական մի բարձր սալօն, ուր խօսում են զանազան փիլիսոփայական, հասարակական եւ գիտական հարցերի մասին սալօնական նրբաճաշակութեամբ եւ թեթեւութեամբ . դուք չը գիտէք խօսակցութեան սկիզբը, շատ բան միայն հարեւանցի ակնարկով է շօշափում . զգում էք որ խօսողը աշխատում է որքան կարելի է գեղեցիկ ձեւերի մէջ ամփոփել իր թընուցիկ մտքերը : Այդ սալօնական խօսակցութիւններին հազիւ թէ շատ բան ուսանի հայ ընթերցողը . նրանք հարկաւոր են այժմ ոչ գերական քաղցրեղէններ, ոչ պիսկվիդներ, այլ աւելի սննդաբարեւ պարզ մտաւոր կերակուր : Ֆրանսական գրականութեան մէջ պէտք է ընտրել եւ թարգմանել աւելի հիմնական, տեւողական գին ունեցող երկերը » :

(«Մուրճ» թիւ 10)

Չեմ գիտեր աւելի անիմաստ եւ աւելի սխալ ձողում քան այն, զոր ուսանայ գրողներն զենին ընդհանրապէս, եւ որով կը կարծուի թէ ո եւ է զուտ գեղեցկագիտական գործի արտադրութիւնը կամ թարգմանութիւնը անպէտ, նոյն իսկ վնասակար է մեր հասարակութեան, որպէս թէ մեր հասարակութիւնը ամբողջութեամբ անուս ու կոպիտ լեռնցիներու շեղջակոյտ մը ըլլար : Ազգ մը կը բաղկանայ իւր մեծադանդուած հասարակ դասէն, որուն պէտք է անչուշտ տալ «սննդաբար եւ պարզ կերակուր», ու իր զարգացեալ դասէն, որուն պէտք է տալ թէ՛ սննդաբար կերակուր եւ թէ՛ քաղցրեղէն . հայ ազգն ալ վերջապէս ունի իր զարգացեալ դասը, ունի բաւական թուով անհատներ որոնք անհրաժեշտ պէտքը կը զգան մըտաւորական «նուրբ» սնունդի . ինչո՞ւ բոնազատել հայ զբաղէտը՝ միմիայն ու յաւիտենաբար հացագործ մը եւ մսավաճառ մը ըլլալու : Եթէ մեր գրական հրապարակը ողորում ըլլար բարձրագոյն արուեստի արտադրութիւններով, եթէ մեր բոլոր զբաղէտները միմիայն ֆանթեզիներ քանդակելով զբաղէին, կ'ըմբռնէի պ. Սարգսեանին զիտողութիւնը, որովհետեւ մեր հասարակութիւնը ընդհանրապէս աւելի պէտք ունի սնունդի ու պարզ գրականութեան քան նուրբ արուեստի . բայց զուտ գեղեցկագիտական արտադրութիւնները մատով կը համարուին մեր մէջ, ու բնաւ վտանգ չկայ որ հրապարակը ողորդեն, ինչո՞ւ տրտնջալ երբ այդ «պակասը» լրացնող անձեր գտնուին :

Իսկ այստեղ, զիտողութիւնը բոլորովին անհիմ է . Անաթոլ Ֆրանսի գործերը, հակառակ իրենց թեթեւ, ուստոտուն երեւոյթին, ամենախորին մտածում կը պարունակեն . եւ սընուցիչ են գերազանցապէս . «Յպիկուրի պարտէզ» էն շատ բան կարելի է սորվիլ, անոր մէջ կեանքի իմաստասիրութեան անգին դասեր տուած է հեղինակը . բոլոր այդ էջերը խտացումն են գիտական ոգւով մը հասարուած առողջ ու պայծառ գիտողութեանց, եւ անոնց մէջ կան հատուածներ — ինչպէս աղջկանց դաստիարակութեան նուիրում էջը, — որ հատորներ կ'արժեն : Պ. Սարգսեան բացարձակապէս կը սխալի «պիսկվիտ» անուանելով գործ մը որ ամենահիւթեղ խորտիկ մըն է, բայց խոհարարական արուեստի ամենամարպիկ ու ամենանուրբ մեթոտովը սլատրատուած : Արդ, ո՞վ իրաւունք ունի պահանջելու որ ժողովրդի մը բաշխում սնունդը նախապատմական պարզութեամբ պատրաստուի միշտ, այնպիսի դարու մը մէջ ուր մսավաճառներն իսկ բարեձեւ ըլլալ կը ջանան, եւ նրպարավաճառները՝ շեք : Պ. Սարգսեան ինքն կան ջանք մը կայ գաղափարները «գեղեցիկ» ձեւով արտայայտելու . միթէ այդ ալ — եթէ նոյն իսկ միայն այդ գտնուէր այնտեղ, — մեծապէս օգտակար բան մը չէ՞ . երթաղբերով իսկ որ անգ բարձր ոճը մատչելի չըլլար մեր հասարակութեան մեծագոյն մասին, — թէպէտ ես բանուորներ իսկ տեսայ որ անհուն հաճոյք զգացած էին անոր ընթերցումէն, որովհետեւ Անաթոլ Ֆրանսի դասական մըն է, նուրբ բայց «պարզ» ձեւով . — Պ. Սարգսեան չի՞ կարծեր որ այդ գրքովը, ճանչցնելով գրելու այդ գերազանց արուեստը հայ (եւ մանաւանդ ուսանայ) զբաղէտներուն, որոնցմէ շատերը ա՛յնքան պէտք ունին այդ արուեստը սորվելու, դարձեալ շատ կարեւոր ծառայութիւն մը մատուցած կ'ըլլայ մեր հասարակութեան :

Պ. Վահան Նալբանդեան, նուիրելով քննադատական մը «Մուրճ» ի Արդ թիւին մէջ, Ա. տր Վինիի քերթումներու թարգմանութեան նիւթին ընտրութեան մասին գանգատ մը չի յայտնել, բայց թարգմանութեան լեզուին վրայ զիտողութիւն մը կ'ընէ զոր անիմաստ կը գտնեմ, ու նոյն իսկ Վինիի քերթումներուն մասին դատողութիւններ կը ներկա-

յացնէ, որոնք ինծի տարօրինակ կ'երեւան:

«Մեզ թուում է, կը գրէ պ. Նալբանդեան, որ ուսանայ ընթերցողների համար թարգմանութիւնը մի քիչ անմատչելի է, որովհետեւ ազատ չէ խորթութիւններից եւ բառերի ընտրութիւնից—մի թերութիւն որից թիւրքահայոց թէ՛ ինքնուրոյն գրողների եւ թէ՛ թարգմանիչների մի մասը գծազգաբար դեռ թօթափած չէ:»

Կ'ուզէի գիտնալ թէ «խորթութիւն» ըսելով ի՞նչ կը հասկնայ պ. Նալբանդեան. շատ հաւանականաբար այդ իր «խորթութիւն» անուանածը այն ջանքն է զոր գրած եմ Վիննիի տողերուն հայագման մէջ պահելու այն նրբութիւնը զոր ունի բնագիրը. այդպէս մտածելու զիս կը խրախուսէ եւ «բառերու ընտրութիւնից» բացատրութիւնը զոր պ. Նալբանդեան կը կցէ «խորթութիւն» ին. պ. Նալբանդեանի համար «բառերն ընտրելը» թերութիւն մըն է ուրեմն. պ. Նալբանդեան խրաչած ըլլալու է այդ թարգմանութեան մէջ տեսնելով կարգ մը քիչ գործածուած, հին հայերէնէ մեզի մնացած բառեր. բայց կ'ենթադրեմ որ պ. Նալբանդեան կարգացած է Վիննիի բնագիրը, եւ գիտէ այն բարձր ու ազնիւ բառեր գործածելու խճամբը զոր ունի այդ բանաստեղծը, եւ պ. Նալբանդեան դիտէ հարկաւ որ թարգմանիչ մը մեկնիչ մը, ընդհանրացուցիչ մը չէ, այլ արուեստագէտ մը որ իր լեզուովը պէտք է վերստեղծէ ճիշդ այն ոճը զոր հեղինակն յղացած է, անոր նըկարագիրը, ճաշակը, թոնը անեղծ պահել ջանալով: Վիննիի քերթուածները կարելի չէ վերջապէս թարգմանել «Մշակ» ին հայերէնովը: Պ. Նալբանդեան պէտք է ըմբռնէ որ խորթութիւնը բառերն ընտրել գիտնալուն մէջ չի կայանար, այլ շատ աղքատ բառարան մը ունենալուն եւ բառերէն իւրաքանչիւրին գործածութեան տեղը չգիտնալուն մէջ. պ. Նալբանդեան պէտք է ըմբռնէ որ հայերէն լեզուին բոլոր բառերը՝ հին, նոր, գաւառական՝ իրաւունք ունին գործածուելու միայն թէ գրագէտը անոնց իւրաքանչիւրին գործածութեան տեղը պէտք է գիտնայ. այդ տեսակէտով, մեր ուսանայ եղբայրակիցները որ արեւմտեան աշխարհաբարէն միշտ գանգատելով հանգերձ՝ արդէն ղգալի չափով օգտուած են անկից, դեռ շատ բան ունին սորվելու թրքահայ գրագէտներէն:

Իսկ այն տողերը որոնցմով պ. Նալբանդեան կը փորձէ բացատրել Վիննիի քերթողական հանճարին նկարագիրը եւ անոր քերթուած-

ներէն ոմանց իմաստը, ցոյց կուտան որ համակրելի հրապարակագիրը, որուն հիւսիսային զրականութեանց մասին աստեղէ մը ի վեր հըրատարակած ուսումնասիրութիւնները գիտակցաբար կատարուած աշխատութիւններու տպաւորութիւնը թողուցած են վրաս, ֆրանսական գրականութիւնը չի ճանչնար, կամ շատ հարեւանցի կերպով կը ճանչնայ:

«Ալֆրէտ Կլիֆֆի առաւելութիւնը, կը գրէ պ. Նալբանդեան, կայանում է նրա գեղարուեստական նրբութեան, զգայնութեան մէջ: Բայց այս առաւելութիւնը պատճառ է դառնում նաեւ մի խոշոր թերութեան — անընդունակ է դարձնում լուրջ պրօբլէմներ, լայն հորիզոններ ընդգրկել:»

Արդ, Վիննիի առաւելութիւնը երբեք չի կայանար իր գեղարուեստական նրբութեան մէջ, — Վիննի անհաւասար է իրիւր արուեստագէտ, ու թէպէտ նուրբ ոճի սիրող՝ ձեռի թերութիւններ ունի յաճախ վսեմ սլացքներու հետ, եւ ֆրանսական գրականութեան մէջ իրմէ շատ աւելի կատարեալ ու նուրբ ձեռով բանաստեղծներ կան: Վիննիի առաւելութիւնը կը կայանայ իր հոգւոյն եզակի անագնութեանը, իր իմաստասիրութեան խրոխտ գեղեցիկութեանը մէջ. եւ ապշեցուցիչ կը գտնեմ որ, մանաւանդ «Հովիւն տունը», «Զիթենեաց լեռը», «Ճակատագիրները», «Մովսէսը» կարգալէ յետոյ, պ. Նալբանդեան կարողացած ըլլայ զլուրջ պրօբլէմներ, լայն հորիզոններ ընդգրկելու անընդունակ» նկատել Վիննիին, որ այդ անբաղդատելի էջերուն մէջ մարդկային կեանքին ամենէն բարձր խնդիրներէն կը ներշնչուի եւ այդ ներշնչման տակ կը յղանայ դաճափարներ որոնք իրենց ազամանդեայ խտացումին մէջ աւելի մեծ քանակութեամբ եւ մանաւանդ շատ աւելի բարձր որակով իմաստասիրութիւն կը պարունակեն քան անմարսելի խորհրդածութիւններով, իմաստակ մանրամասնութիւններով թխմուած շատ մը մեծափոր հաստրներ:

Ու տեսէք ինչպէս պ. Նալբանդեան կը մեկնէ «Մովսէսը»:

«Մովսէսը» խրոխտ շնչտով գրուած մի ուսանաւոր է, ուր Իսրայէլի մեծ մարգարէն՝ Եհովային դէմ առ դէմ կանգնած՝ պաղատում է. «Տէր, աւա՛ղ, ես հզօր եմ եւ մենաւոր, թո՛յլ տուր որ հողին քունը քնանամ» ։ Եւ Տէրը լըսում է իր ծառայի ձայնը. «հզօր մենաւորը» վախճանում է:»

Այսպէս , պ. Նալբանդեան աստուածաշնչական պատմութեան մէկ գրուագիին ոտանաւորի վերածումը, ճանճրացած ծերունիին մը մահաբազմիկ աղօթքին Եհովայէն լսուելուն հասարակ զրոյցը կը տեսնէ լոկ այդ վիթխարի քերթուածին մէջ—ամենէն վսեմը թերեւս զոր ֆրանսական բանաստեղծութիւնն արտագրած ըլլայ— ուր վինեի տառապանքը երգած է մարդկային մը ջնակոյտին մէջ իր տարապայման մեծութիւնովը կղզիացած ու անով սառնապող Հանճարաւոր Մարգուն :

«Հովիւին տունը» եւ «Գայլին մահը» , կ'ըսէ պ. Նալբանդեան , ամիսփում են իրանց մէջ լուրջ խորհրդածութիւններ : » (!)

«Լուրջ խորհրդածութիւններ» , որպէս թէ պարզեւարաշխութեան ճառի մը վրայ խօսէր մարդ , «Լուրջ խորհրդածութիւններ» երբ խընդիրը «Հովիւին տուն» ին վրայ է , որ կը պարունակէ մարդուն կուրծքէն թռած ամենէն աղւոր բողոքը անպայ ու ջախջախիչ բնութեան դէմ ու ամենէն վեհ արտայայտութիւնը կ'նշազգած հոգեկան վրդովումին , երբ խնդիրը «Գայլին մահ» ին վրայ է , այսինքն ստոյիկեան ամենէն մաքուր երգին զոր մարդկային քնար մը չ'հեցուցած ըլլայ երբեք :

Ի՞նչ մտածել երբ պ. Նալբանդեան «կաթուղիկրոմանդիկ» ների շարքին պատկանող կը կարծէ վինեին , ու անոր «Մովսէսը» , «Ճակատագիրները» եւ «Ձիթենեաց լեռը» «միտտիկ» տրամադրութեամբ համակուած (!) կը նկատէ : վինեի անհաւատ էր . եւ եթէ մարդ անտեղեակ իսկ ըլլայատոր , իր այդ քերթուածները կը բաւեն զայդ գուշակել տալու . որովհետեւ վինեի իր մտածումներն արտայայտելու համար աստուածաշնչական պատկերներու մէջ զանոնք խորհրդանկարած է , ատկից կարելի չէ հետեւցնել թէ ան կաթուղիկ-միտտիկ մը եղած ըլլայ , ինչպէս կարելի չէ երեւակայել որ Կէօթէ կամ Պայրըն կաթուղիկ-միտտիկներ եղած ըլլան՝ որովհետեւ մին «Պատուսթ» ին նախերգանքը գրած է ու միւսը «Կայէն» ու «Երկինք եւ երկիրը» : կաթուղիկներու տեսակէտով , «Մովսէսը» , «Ճակատագիրները» , եւ մանաւանդ «Ձիթենեաց լեռը» նայնոյանքներ են . անկախ քննադատին համար , այդ քերթուածներուն նիւթը զգեստ մըն է լոկ , որով վինեի հագուեցուցած է իր անձնական մտածումը , ճակատագրին դէմ ըմբոստացող , Արարչութիւնը յոռի գտնող , տիեզերական անարդարութենէն դառնացած մարդու մը մտածումը :

«Մուրճ» ի նոյն թիւին մէջ , պ. Լ. Սարգսեան հետեւեալ զուարճալի տողերը կը նուիրէ պ. Թէքէեանի հատորին .

«Շքեղ ապուած այս գիրքը պարունակում է իր մէջ «ոտանաւոր եւ արձակ քերթուածներ» , որոնց համարեա միակ նիւթը սէրն է : այն էլ հասցրած հեշտասիրութեան : Մի զգացմունքի այդչափ ծայրայեղ զարգացումը հիւանդ երեւոյթ է . դա սիրամոլութիւն է (էրօտօմանիա) : Գիշեր եւ ցորեկ հեղինակը հէնց գեղեցիկ աղջկանց համբոյրների մասին է երազում . . . պատանեկան այդ տենչերի մէջ հեռաքրքրական ոչինչ չկայ . նոր է , եւ մեզ համար տարօրինակ . յոյզերի արտայայտութեան այն ձեւը որ պ. Թէքէեան փոխ է առել ֆրանսիական զեկազեւտ եւ սիմպոլիստ բանաստեղծներից » :

Ռուսահայ քննադատներն ընդհանրապէս «զեկազէնտ» կամ «սիմպոլիստ» կ'անուանեն (եւ այդ բառերը կը գործածեն իբրեւ է'ն արհամարհական բառերը զոր կարելի է նետել քերթող մը երեսին) այն բոլոր գրողները որ ւանդակաւ աափակութենէն քիչ մը կը հեռանան . չեմ գիտեր ի'նչ պիտի ընեն , ի'նչ անուն պիտի գտնեն իրենց սարսափն ու շուտուր մը արտայայտելու համար երբ իրական «զեկազէնտ» ի մը կամ «սիմպոլիսթ» ի մը , ինչպէս Մալարմէին , Լաֆորկին կամ Ռենեիէին , գործը ձեռքերնին լինայ : Բայց պ. Սարգսեան աւելի յառաջ կ'երթայ , արտաբանութեան կը զիմէ՝ իր անհասկացողութիւնը արդարացնելու համար . իրեն համար «էրոթոմա'ն» մըն է . պ. Թէքէեանը , որ ոճիւրը գործեր է սէրը , ու միայն սէրը երգելու : Բայց ի'նչ անուն պէտք է տալ այն հիւանդութեան որով վարակուած են այն անձերը որ չ'հասկցած բաներնուն վրայ վճիռ կ'արձակին :

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ



ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

—o—
Թ Ա Թ Ը
(Շար.)

ՇԷՑԻՆԵՐԸ

Շէյխ Սալիհի այդ հրաշագործութիւնը տեսնելով ներկաները կը զարհուրին ու անոր կ'երկրպագեն . շրջակայքէն ամէնքը իրեն ուխտի կուգան, շէյխերը հպատակութիւն կը յայտնեն, բոլոր գառ ունեցողներն իրեն կը զիմէն զանազան բնձաներով . կէս միլիոն ժողովրդի բերան անոր անունը կ'արտասանուի իբր սրբութիւն սրբոց . երեսուն տարի է որ մեռած է, անոր գերեզմանին վրայ հսկայ աշտարակ մը շինած են եւ ամէն տարի հոն անթիւ ոչխարներ կը գլխատուին . անոր անունով չեն երգնուր, ոչ ալ թթենիին վրայ որ գեռ գոյութիւն ունի :

Շէյխ Սալիհին կը յաջորդէ իր տղան, աստուածորդի Շէյխ Իպրահիմ, որ ծնած է ու կը բնակի Կիլիկիոյ Սուէտիա նահանգը, ծովէն վեց մղոն հեռու ձըլլիէ բսուած գիւղը՝ ձէպէլ-Ագրա հսկայ լեռան ստորոտը, Որոնդէս գետին եզերքը: Ձըլլիէ գիւղը հիմնուած է ծովուն մէջ երկնցող բլրակի մը վրայ . բլրակին ծայրը կը փայլին երկու գեղեցիկ շէնքեր . որոնցմէ մէկը Շէյխ Սալիհի գերեզմանն է եւ միւսը Շէյխ Իպրահիմի պալատը :

Շէյխ Իպրահիմը Տաճկին լուծը կը կրէ իր 80000 կիլիկաբնակ ժողովրդով, կը պարծենայ իրեն ձէպէլ-Քէլպ-Ձէլէ եւ Տերսուն նահանգներու վրայ որ իր ազատ լեռներն են, եւ որոնց վրայ Թուրքիոյ իշխանութիւնը անուանական է միայն (պէտք չէ շփոթել այս Տերսունը Կիլիկիոյ Տարսոնին հետ) :

Շէյխը կ'իշխէ ամբողջ ժողովրդին, իր ստորակարգեալ Շէյխերը իրեն կապուած են, ժողովուրդն ալ անոնց . ամէն մէկը կը հնազանդի իր պետին եւ անհնազանդը դաւաճան կը նկատուի : Այսպէս Թաթերը հողեւոր եւ բարոյական խիստ կազմակերպութիւն մը ունին իրենց մէջ եւ կարծես կանոնաւոր բանակի մը պէս շէյխերու կամ աւելի ճիշդ Շէյխ Իպրահիմի հրահանգներուն համեմատ կը շարժին : Ձարգացման տեսակէտով Շէյխ Իպրահիմն ալ միւս շէյխերէն չի տարբերի, կա- քիչ կը տարբերի :

ՏՆՏԵՍԱԿԱՆԸ

Այս ժողովրդի տնտեսական կացութիւնը անհաւասար է . ամէն հասանք տնտեսական տարբեր դրութեան մը մէջ կը դանուի, քաղաքական տարբեր պայմաններու ազդեցութեան տակ . այսպէսով իրենց տնտեսականը կը բաժնուի երեքի, (նչպէս իրենց քաղաքական պայմանները : Միայն եթէ բնդհանուր պարագայ մը ունին յիշելու արժանի . այն է որ Թաթերը ճարպիկ ու աշխատասէր ժողովուրդ մըն են, ամէն տեղ եւ ամէն պարագայի մէջ :

Ատանայի Թաթերը, մօտ 40000 բնակչութիւն, ցրուած են Ստանա, Տարսոն եւ Մերսին քաղաքներու շրջակայ գիւղերուն մէջ, շատ հարուստ են : Արոնք զազլեականութիւն մըն են որ հարիւր տարիէ ի վեր հաստատուած են հոն եւ հեռոջեմէ գաղթելով կը բազմանան . իրենք զիրենք միւսլիման ձեւացնելով յաջողք են շնորհիւ իրենց աշխատանքին եւ ճարպիկութեան հարստանալ եւ բարձր պաշտօններու տիրանալ, յետոյ Տաճկիներու ուշադրութիւնը դարձած է վրանին եւ այժմ ատելութիւնը անկարագրելի է . զարմանալի է սակայն որ այդ ժողովուրդը հակառակ իր սգիտութեան ու շփումին չի ձուլուիր Տաճկաց մէջ, աղջիկ չեն տար առնել իրարու հետ . զարմանալի սէր ունին դէպ ի իրենց ազգը . կը մնան հաւատարմ իրենց խորհուրդներուն եւ շէյխերուն, սիրով կը հիւրասիրեն իրենց ազգակիցները, կ'օգնեն անոնց . ճոխ են հանգանակութիւններու մէջ :

Լեռնականները որ ազատ են զինուորականութիւնէ ու ամէն տեսակ օրինաւոր եւ ազօրինի տուրքեր վճարելէ, բնդհակառակն աղքատ են, երկրի նեղ ու ժայռուտ ըլլալուն եւ իրենց երկրագործութեան հմուտ չըլլալուն պատճառով : Սովորաբար կ'աղբին ասպատակութիւններով եւ աւարտութիւններով :

Միաստի մեծ արդիւնաբերութիւն ունին, կը ցանեն ու կը քաղեն ուղածնուն չափ, եւ կը տանին ծախել շրջակայ քաղաքները, Համա, Համուս, Հալէպ, Մետիք, Չէրեմ, եւն . մեծ բնդհարումներ կ'ունենան լեժիի պաշտօնաներուն հետ, շարունակ սպանութիւններ կը պատահին, երկու կողմէն, բայց այդ պարզաներէն չեն յուսահատիր . վերադարձնուն կը կողոպտեն հանդիպած ճամբորդները, կը կոխեն պղտիկ գիւղեր եւ կը դառնան ճոխ աւարտութիւններով, ճիւղով, ջորիներով, դըրամով, հագստեղէնով, եւն :

Այս ժողովուրդի ունի քանի մը յատկու-
թիւններ որ շատ կը նպաստեն իրենց այս
կենսական պայքարներուն մէջ . նախ՝ ունին
գաղտնապահութիւն , պէտք եղածէն աւելի ,
ինչպէս տեսանք իրենց կրօնական խորհուրդ-
ներու մասին . շրջակայ բոլոր դրացի աղագ
մէջ առած ի կարգ անցած է անոնց գաղտնա-
պահութիւնը , «առ թաթ է» : կ'ըսեն Հայերը
երբ «առ գաղտնապահ է» ըսել ուզեն մէկուն
համար . «Քէլլան» բառը այստեղ Տաճիկները
չի վերգովեցներ այլ եւս , «Աւնա պիր շէյ տէ-
րիմ ամմա մէլլան օլաճաքսըն հա' » կ'ըսեն
երբ «գաղտնիքը պիտի պահես» ըսել ուզեն :
Շատ լաւ գիտեն ընթացած ճամբանին , լեռ-
ներն ու քաղաքները , գիւղերն ու դաշտերը :
Վարժուած են չքաւորութեան ու տառապան-
քի , կը քալեն օրերով առանց յողնութիւն զգա-
լու , կը գիմանան անօթութեան եւ ծարաւի :
Ազգասէր են եւ՝ ինչպէս ըսի՝ կը սիրեն քաջը ,
կը պաշտեն ուժը եւ անոր համար զոհողու-
թիւն չեն խնայեր : Ահա այս յատկութիւնները
կ'օգնեն իրենց յաջողաբար հատարելու իրենց
ասպատակութիւնները . միշտ խմբակներ
կազմելով կ'երթան հեռու քաղաքներ , կը խո-
րատուզուին մինչեւ կիլիկիոյ ներսերը , ճամ-
բաներ կը կտրեն , երթեւեկութիւններ կը
դադրեցնեն , պզտիկ գիւղակներէ բռնի տուրք
կը հաւաքեն , եւ այս վերջինը աւելի թուրք
գիւղացիներու կը պատահի , որովհետեւ ա-
նոնք ցիրուցան մանր գիւղերու մէջ կը բնա-
կին . երկրորդ՝ գէպ ի թուրքերը մասնաւոր
ատելութիւն մը ունին . այդ ատելութիւնը կը
ցոլեցնեն նաեւ զանոնք ճամբաները կողոպտե-
լիս անոնք . շատ քիչ անգամ պատահած է որ
քրիստոնեայ մը կողոպտելէ յետոյ անձին ալ
վնաս պատճառեն , մինչդեռ երբ որսերնին
թուրք մընէ , այն ատեն իրենց վարմունքի ե-
ղանակը կը փոխուի . եթէ անձնատուր ըլլայ
թուրքը , կը կողոպտեն զայն եւ թեթեւ մը վե-
րաւորելով ազատ կը ձգեն , իսկ եթէ գիմադրէ ,
անպատճառ կը սպաննեն , նոյն իսկ եթէ ի-
րենցմէ ալ մէկ երկու մարդ կորսնցնել հարկ
ըլլայ :

ՊԱՀԼԱԻ

(Շարունակելի)

ՀԱՅ ԷՋԵՐ

ՏԱՂ ՅՈՂԱՌԱՆԻՆ ԱՍՍՏԵԱՂ

Անել ես թէ գարնան վախթը ,
Սիրակա'ն , ամա'ն ,
Որ բացուի մեր պաղչին վարդը ,
Ինչ ցոյց կուտամ ծոցիս զարդը ,
Սիրակա'ն , ամա'ն ,
Ամա'ն , ե'կ պաղչէն , այս է լաւ վախթը ,
Բացուել է վարդը :

Վարդ զրչիմ քիչ՝ կրկն թազայ ,
Սիրակա'ն , ամա'ն ,
Դրեմ թղթով սիրոյ արդը ,
Ե'կ պաղչէն , բեր ըրախ մազա ,
Սիրակա'ն , ամա'ն :
Ամա'ն , ե'կ պաղչէն , այս է լաւ վախթը ,
Բացուել է վարդը :

Վարդաչոյն երեսդ է փայլուն ,
Սիրակա'ն , ամա'ն ,
Իմ գեղեցիկ նաչու խաթուն ,
Ահա եղեւ օրհնեալ գարուն ,
Սիրակա'ն , ամա'ն ,
Եկ պաղչէն , այս է լաւ վախթը ,
Բացուել է վարդը :

Վարդաչոյն երեսդ է փայլման ,
Սիրակա'ն , ամա'ն ,
Դու վարդ ես . պիւպիւլի նման
Բանի՛ կանչեմ ամա'ն , ամա'ն ,
Սիրակա'ն , ամա'ն ,
Ե'կ պաղչէն , այս է լաւ վախթը ,
Բացուել է վարդը :

Վարդով գըլուխդ դարդարէ՛ ,
Սիրակա'ն , ամա'ն .
Ե'կ իմ խնդրքըս կատարէ՛ ,
Ինձ այս տարտէն ազատ արէ՛ ,
Սիրակա'ն , ամա'ն .
Ե'կ պաղչէն , այս է լաւ վախթը .
Բացուել է վարդը :

Տաղարան, 156, է-ք. 171, 172.
Վիեննայի վանք

ԵՒԳԻՆԷ

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ
Շ Ի Ր Վ Ա Ն Ջ Ա Դ Է Ի (1)

o—o

Առաջին տեսարանը իրաւարան Ալավէրտեանի դահլիճն է, ուր հաւաքուած հիւրերը խօսում են օրուայ չարիքի մասին: Չարիքն էլ այն է, որ մի ոմն Արաքաջեան սաքտիկ տանջելով իր կնոջը, նորան հասցրել է ինքնասպանութեան: Ալավէրտեանը, որ գործին լաւ ծանօթ էր, բացատրում է, որ կնոջ տանջանքի պատճառն էր նորա օրիորդ ժամանակ կատարած սխալը. այս պատմութիւնը այնպէս վատ է ազդում նրա կնոջ Եւգինէի վրայ, որ գրեթէ ուշաթափուում է: Հիւրերը ցրում են. որոնց մէջ, տիկին կալամքարեանը չարամիտ ժպտով ցոյց է ուզում տալ, թէ Եւգինէի անցեալն էլ անարատ չի եղել, մինչ այս վերջինը իր ուշաթափուելը վերագրում էր կայծակին: Ալավէրտեանը բացատրութիւն է պահանջում կնոջ տաքօրինակ վարմունքի, տխրութեան, վրդովմունքի եւ զեղնութեան մասին. կինը լռում է, բայց տանջւում է միաժամանակ եւ ամուսնու հարցերից խուսափում: Այս հանգամանքը տարակուսանքի մէջ է պցում Ալավէրտեանին, բայց իւր կնոջ սաստիկ սիրելուց նա վանում է ամէն մի կասկած: Այնուհետեւ Եւգինէի իւր մօր հետ ունեցած խօսակցութիւններից յայտնի է լինում, որ նա իրան անարժան կին է համարում իւր ազնիւ ու մեծահոգի ամուսնուն, նաև տանջւում է իւր ակամայ յանցանքի պատճառով: Այս հանգամանքներում անա այցելութեան է գալիս Եւգինէի մուրեցնողը՝ ոմն Գարօ, եւ առաջարկում է նորոգել հին կապերը: Այս առաջարկն արդէն բաժակը լցնում է եւ նա որոշում է բաց անել ամուսնու առաջ եղելութիւնը: Սարսափահար, Ալավէրտեանը քէչ է մնում ընկնել կնոջ վերայ՝ խորտակելու նորան, եւ հազիւ զսպել կարողանալով իրան, սկսում է տանջուել հոգեպէս: Նա սրտանց ուզում է ներել կնոջը. «Բայց ներել կարելի է երբ կարողանաս մոռանալ այն, — գոչում է Ալավէրտեանի քոյր Մարթան — իսկ այդպիսի խայտառակութիւն երբէք չի կարելի մոռանալ:» Ալավէրտեան այդտեղ ո՛չ իրան ոչ էլ կնոջը խայտառակուած չի զգում, քանի որ դա մանկութեան մի սխալ է եղած լոկ, այն ինչ նրա քոյրը Մարթան, միակ ելքը ապահարզանն է համարում: — «Ես չեմ կարող ապահարզան պահանջել, քանի որ

(1) Այս յօդուածը պիեսի առաջին ներկայացման տութիւ է գրուած:

ուխտած եմ կնոջս. իսկ իմ անցեալը, միթէ ես անարատ եմ, միթէ ես չեմ խաբել, ինչո՞ւ ուրեմն նա պիտի ներէ ինձ, իսկ ես ոչ»: Այս խօսակցութեան պահին ներս է մտնում Եւգինէն եւ յայտարարում է, որ ուզում է հեռանալ մօր մօտ, որպէսզի զէթ գրանով ամոքի ամուսնու ցաւերը: Ալավէրտեանը չի համաձայնում. նոյն րոպէին մանկանոցից լաւում է քորօցի երգ, Եւգինէն ուզում է հեռանալ բայց չի կարողանում եւ թուլացած ընկնում է վայր: Ուշքի գալով նա իրան գտնում է ամուսնու գրկում, որ ասում է, — «Համոզմամբ ներեցի ես քեզ եւ սիրելով մոռանում եմ անցեալը. » Ապա գտնալով քորջը նա աւելացնում է. «Լսո՞ւմ ես, ես այսպէս եմ ցանկանում, այս է անա իմ համոզմունքը»: — «Ուրեմն մոռացիր եւ ինձ», պատասխանում է մինչ այն «ազատամիտ հայացքներով տէր» ճանաչուած Մարթան եւ հեռանում եղբօր տանից:

Ինչպէս տեսնում էք, պ. Շիրվանզադէն շոշափում է ըստ երեւոյթին մի շա՛տ ժամանակակից հարց եւ Ալավէրտեանի բերանով պաշտպան է դուրս գալիս մի լիովին մարդասէր եւ ազատամիտ գաղափարի: Ալավէրտեանի վարմունքն ու տրամաբանութիւնը ինձ թւում է, որ կատարելապէս արձագանք գտան հանդիսականների մեծամասնութեան սրտում, քանի որ պիեսան մեծ աջողութիւն ունեցաւ եւ անվերջ ծափերու առիթ տուաւ:

Դա, ինչպէս տեսնում էք, կնոջ իրաւունքների հաւասարման խնդիրն է մարդկանց իրաւունքներին: Այդ հարցն այնպստ եւ անծանօթ չէր մարդկութեան, բայց այն ձեւով, ինչպէս մենք տեսանք այս խաղում, կարծեմ մեզանում դեռ ոչ ոք չի՛ շոշափել:

Մենք խնդիրը պարզելու համար ստիպուած ենք մի քիչ շեղուել գրական-գեղարուեստական կողմից եւ ուզում ենք քննադատութեան առնել այս թատերգութեան լոկ գաղափարը՝ գիտական եւ ընկերական տեսակէտներից, գաղափար, որ այնքան թերուղէմ խօսակցութիւնների առիթ տուաւ հասարակութեան մէջ:

Երբ մենք մարդկութեան երկու սեռի հաւասարութեան հարցն ենք դնում իրաւունքների մէջ, պէտք է, անտարակոյս, միեւնոյն հարցը դնենք եւ նրանց պարտականութիւնների եւ նրանց էութեան ու կոչման մէջ: — Եթէ մենք ուզում ենք խնդրին լուրջ վերաբերուել, պէտք է ուսումնասիրենք թէ ի՞նչ է կինն ըստ էութեան եւ ի՞նչ է տղամարդն ըստ էութեան, եւ ապա միայն, դարերի եւ հազարաւոր դարերի մշակած համայնական կազմը տապալելու ջանանք: Մենք պիտի խորամուխ

լինինք պարզելու եւ հասկնալու թէ մեր պահանջած իրաւունքներու հաւասարութիւնը բղխում է արդեօք իրերի անհրաժեշտութիւնից, մի պարաք չէ՞ նա արդեօք, մի գոհողութիւն կամ զրկանք չէ՞ մի կամ միւս կողմի համար:

Մենք պէտք է գիմենք բնութեանը, որովհետեւ չկայ մի աւելի անողոք ու անաչառ դատաւոր քան բնութիւնը, իմանալու համար թէ ի՞նչ է տուել նա մեզ եւ ի՞նչ կանանց: Այդ ամէնը տեսնելուց եւ ճանչնալուց յետոյ միայն երբ մենք կանգնած ենք բնական, հաստատուն եւ յաւիտենական օրէնքների վրայ, հիմնենք մեր չէնքը, որ Աւետարանի ասածի նման, «ոչ հողմից տատանուի, ոչ անձրեւից փուլ դայ»:

Հարցն այստեղ բաւական նեղ է դրուած: Շիրվանչաղէն շօշափել է միայն խնդրի սեռական մասը, ուստի մենք էլ պիտի աշխատինք զորանից շատ չհեռանալ, կարելւոյն չափ կանգնելով գիտական հողին վրայ: Արդ, Դարելինը, որի հեղինակութիւնը այսպիսի խնդիրներում վեր է ամէն կասկածից, ասում է որ «արուների սեռական ցանկութիւններն, համարեա բոլոր տեսակներում, աւելի զօրեղ, աւելի ուժգին են քան էգերինը»: Լօմբրոզօն, կանանց ամենատաղանդաւոր ուսումնասիրողներից միւնը, համաձայնելով Դարելինի հետ՝ պնդում է որ բազմաթիւ կանայք անձնատուր են լինում համարեա առանց հաճոյքի, եւ սա հաստատում է թէ՛ փորձառու տղամարդկանց եւ թէ՛ յայտնի կանանց խոստովանութիւններով: Նա ի միջի այլ բազմաթիւ վկայութիւնների բերում է Սերգիի խօսքերը, թէ «կինը ցանկանում է սիրուել տղամարդուց, բայց անձնատուր է լինում ինչպէս մի գոհ. ես ճանաչում եմ շատերին որոնք զգոււմ են զուգակցութիւնից, թէ եւ պաշտում են իրանց ամուսիններին, ճանաչում եմ օրիորդների, որոնք բախտ եւ ուրախութիւն էին որոնում ամուսնութեան մէջ, բայց որոնք միայն ձանձրոյթ գտան այնտեղ...»

Միջլէն ասում է որ «յիմար են, որոնք կարծում են թէ կինն անձնատուր է լինում ֆիզիքական սիրուց զրդուած: Փորձառու մարդկանց շատ լաւ յայտնի է, որ կնոջ յաղթելու առաջին պայմանն է հաճոյակատարութիւնն ու բարութիւնը:»

Մարդը նրբէ՛ք նպատակ չէ կնոջ համար, այլ միջոց. կնոջ նպատակն է զաւակը. սա այնքան գեղեցիկ կերպով արտայայտուած է Աստուածաշունչի մէջ, ուր անզաւակ Հոաքիլը գոռում է Յակոբ նահապետի երեսին. «Տուր ինձ մի որդի, թէ չէ ես կը մեռնիմ»: «Մարդը կնոջ համար մի հովանաւոր է լոկ եւ իւր զա-

ւակների հայրը», ասում է Լօմբրոզօն:

Սեռական նուազ հաճոյքն է պատճառ որ շատ օրիորդներ մի անգամ սխալւելուց յետոյ հիւսմափ՛ երեւակայած պատրանքից, դադարում են այնուհետեւ մոլութիւնից:

Այդ ամենի հետ, կնոջ հոգոյն մէջ կան գրծեր, որ տղամարդու համար միանգամայն անհասկանալի են, ինչպէս օրինակ «կուսութեան զգացումը»: Դա կնոջ համար թաք ու պարձանք է, եւ այնքան խոր ու արմատական է այդ զգացումը, որ շատեր, ամուսնացած օրիորդներ, հրաժարում են առաջատից իրանց սեփական ամուսինների հետ: Բոլոր ամուսնացած կանայք կարող են հաստատել, որ կանանց մեծամասնութիւնն էլ երկար ժամանակ իրանց ամուսիններին չեն կարողանում ներել այն որ նոքա ամուսնու ձեռքով զրկուել են այնպիսի մէ թանկագին գանձից, ինչպիսին է կուսութիւնը: Միայն տարիներն ու զաւակներն են, որ մոռանալ են տալիս կնոջ իւր անգնահատելի կորուստը: Այդ է ահա պատճառը, որ բոլոր կուլտուրական լեզուները երկու բառ ունին ամուսնացած եւ ամուրի կանանց համար. զորանք իրանց զգացումներով եւ էութեամբ միանգամայն տարբեր էակներ են. նորանցից մին «օրիորդ» է իսկ միւսը «կին»: Ո՛չ մի կուլտուրական լեզու այսպիսի տարբեր բառեր չունի ամուրի եւ ամուսնացած տղամարդու համար:

Այդ ամենը կարծես չեշտելու եւ երկու սեռերի մէջ եղած խրամատը հաստատ եւ անխուսափելի անելու համար, բնութիւնը մի ֆիզիքական պատուար է զրել որի միւս կողմը յղութեան ուրուականն է կանգնած իր սարսափներով: Այս բոլորը միասին համախմբուած են պաշտպանելու մի թոյլ էակի անարատութիւնը՝ գրեթէ մի անտիկ բերդի նման...

Թիֆլիս ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

(Վերջը յարող յիւով)



ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

«Շարժում» իր վերջին յօդուածներէն մէկուն մէջ, գովեստով յիշելէ յետոյ դրօշակեան եւ հնչակեան պատգամաւորներու համերաշխ ընթացքը՝ Ազատական Օսմանցիներու Համագործակցութիւն, Կ'եղրակացնէ թէ Միութիւն քաղաքացիները դատարկամիտներ են եւ թէ բնաւ պէտք չկայ յեղափոխական մարմինները մշտապէս միացնելու, քանի որ «հարկ եղած ատեն, յեղափոխական մարմիններու ներկայացուցիչները գիտեն համերաշխ ընթանալ» :

«Շարժում» ի այդ եղրակացութիւնը բացարձակապէս սխալ է : Նախ ատու «Շարժում» խոշոր հակամութեան մը մէջ ինկած Կ'ըլլայ նոյն իսկ ինք իրեն հետ : Ասկից քանի մը ամիս առաջ, «Շարժում» հրատարակեց յօդուածներ ուր յեղափոխական մարմիններու միացումը մեծապէս օգտակար կը նկատէր : Նոյն կարծիքն երեւցաւ «Իրօշակ»ին եւ «Հայրենիք»նի մէջ՝ «Նոր կեանք»ի կողէն անմիջապէս յետոյ, — եւ անկից առաջ ալ : «Հայրենիք»ի մէջ երեւցան նոյն իսկ յօդուածներ ուր յեղափոխական մարմիններու միջեւ համերաշխ գործակցութիւնը անբաւական կը համարուէր, ու բացարձակ միութեան մը անհրաժեշտ պէտքը կը հռչակուէր . այնպէս որ եթէ Միութեան իրազորումը փափաքելը դատարկամտութիւն է, «Շարժում»ն ալ տեղունի դատարկամտներու շարքին մէջ : Ինչպէս արդէն, հաստատումը զոր կ'ընէ «Շարժում», անճիշտ է ինքնին : Ճիշտ չէ, գծադրաբար որ մեր յեղափոխական մարմինները բոլոր կարեւոր պարագաներուն մէջ զիտցած ըլլան համերաշխ գործել : Այն միաբանութիւնը զոր ցոյց տուին հնչակեան եւ դրօշակեան պատգամաւորները վերջին Համագործակցութիւն մէջ, բացառիկ երեւոյթ մըն էր, որ առաջին անգամն ըլլալով տեղի կ'ունենար . եւ ատի բնաւ չի կրնար ապահովել որ այսուհետեւ ուրիշ Իրօշակեաններ ու Հնչակեաններ՝ ուրիշ նոյնքան կարեւոր պարագաներու մէջ՝ նոյն համերաշխութիւնը անպատճառ ցոյց պիտի տան : Կը բաւէ անցեալը այլք առջեւ ունենալ : «Շարժում»ը կը մոռնայ որ 1899ին, ճիշտ միեւնոյն պարագային մէջ, Իրօշակեաններն ու Հնչակեաններն անհամերաշխ եղան . բարենորոգմանց շուտափոյթ գործադրումը խաղաղա-

կանակէս ստանալու համար, Բարիզի Հնչակեաններու խումբ մը եւ ժընեւի «Արեւմտեան Բերօ»ն միեւնոյն ժամանակ Սուլթանին հետ բանակցութիւններ ունեցան, առանց իրարու հետ ոեւ է համերաշխութեան, — ընդհակառակն : 1894ի Սասունի զէպրերուն, Իրօշակեաններն ու Հնչակեաններն համերաշխ ըլլալէ հետու էին, նմանապէս Ձէյթունի ապստամբութեան ատեն, — եւ սակայն «կարեւոր», շատ «կարեւոր» պարագաներ էին առնալ : Պայ Ալիի ցոյցին ատեն, Իրօշակեանները ոչ միայն Հնչակեաններուն հետ համերաշխ չէին, այլ եւ անկից քիչ յետոյ հնչակեան վարիչ Արփարեանը մատնիչ հռչակելու գաղափարն ունեցան, — ինչ որ անշուշտ Հնչակեաններու վարկը վորացնելու եղբայրական զգացումէն չէր որ կը բղխէր :

Անոնք պէտք չէ որ մոռնուին : Պէտք չէ մոռնալ որ ոչինչ աւելի տկարացուցած է հայ յեղափոխական պայքարը՝ որքան այդ կուսակցական աղէտուոր ներքին պառակտումը : Միութիւն քարոզողներուն գլխաւոր փափաքն է այդ տխուր երեւոյթը վերջնապէս ջնջուած տեսնել : «Դատարկամտութիւնը» այդ փափաքին լրջութիւնը ուրանալուն մէջն է որ կը կայանայ : «Շարժում», որ Օսմանցիներու Համագործակցութիւն մէջ հայ պատգամաւորներու ցոյց տուած համերաշխութեան կը հետեւցնէ թէ այդ միաբան ոգին միշտ պիտի յայտնուի երկու կուսակցութեանց միջեւ : Ինչպէս անհրաժեշտ լինելով միեւնոյն միջոցին ուր այդ համերաշխութիւնը տեղի ունեցաւ Բարիզ, Ամբիկայի երկու կուսակցութեան ինքիւնը շրթար կը յօշոտէին . «Հայրենիք»ը «վստահելի մարդիկ էք», կը հարցնէր Հնչակեաններուն, հայ յեղափոխականներուն համար Հնչակեաններուն հաւաքած գրամները «կորսուած» կը հռչակէր . «Ձայն Հայրենեաց»ն ալ, երբ այս նախափոխներէն յետոյ կը հրաւիրուէր Սասունի գործին անցնելու, միեւնոյն նախափոխքը կը դարձընէր «Հայրենիք»ի Իրօշակեաններուն, «վստահելի չէք»-ի եղանակը կրկնելով : — Այս ձեւով ազգ մը չի փրկուիր : Ահա ինչչու այս իրերու վիճակը պէտք է վերջ գտնէ, եւ անմիջապէս :

Միութեան խնդրոյն վրայ իր վերջնական որոշումը յայտնելէ առաջ վեր, Հնչակեաններուն, Իրօշակեան կուսակցութեան վարիչ մարմինը պէտք է ի նկատի առնէ սա ամենա-

կարեւոր տեսակէտը . — Միութիւնը բազմա-
 լի է եւ անհրաժեշտ , ոչ այնչափ երկու ուժե-
 իու միացմամբ ամբողջական ուժին բազմա-
 պատկուծին համար , որքան կուսակցական
 պատուարներուն ջնջումով մեր ներքին մա-
 հացու երկպառակութեանց չքացումին համար :
 Եւ հոս կ'ուզեմ պատասխանել ուրիշ առար-
 կութեան մըն ալ զոր կարգ մը Դրօշակեան-
 ներ սկսած են փսփոսալ վերջերս . «Միանա՛լ ,
 կ'ըսեն , բայց որո՞ւ հետ , ո՞վ կայ Հնչակեան-
 ներուն մէջ , վստահելի՞ անձեր են , գործօն
 տարրեր ունի՞ն , ուժ ունի՞ն . վերջապէս՝
 կ'արժէ՞ միանալու նեղութիւնը յանձն առնել » :
 Միութիւնը անհրաժեշտ եւ Հնչակեաններուն
 կոչը գովելի գտնելէ յետոյ , յանկարծ կ'ըլլել
 Հնչակեանները ուժէ զուրկ ու անվստահելի
 նկատելը՝ լրջութենէ եւ ազնուութենէ զուրկ
 վարմունք մընէ , եւ չեմ կրնար երեւակա-
 յիլ որ այս անիմաստ փսփոսուքը պաշտօնա-
 կան յայտարարութեան մը ձեւն առնէ երբեք :
 Նպատակս Հնչակեաններուն ուժեղութիւնն ա-
 պացուցանել չէ . առի պիտի ապացուցանեն
 զէպքերը , եւ ոչ թէ լրագրի յօդուածներ :
 Ինչ որ կ'ուզեմ ապացուցանել , անհրաժեշ-
 տութիւնն է Միութեան՝ նոյն իսկ այն պա-
 րագային ուր Հնչակեաններն իրօք զուրկ ըլլա-
 յին ուժէ , կամ Դրօշակեանները չունենային
 այն բոլոր ուժը զոր ունենալուն կը պարծին :
 Բան մը կայ որ անվիճելի է , սա թէ՛ որքան
 ալ ինքզինքնին ուժեղ կարծեն , Դրօշակեան-
 ներն ալ , Հնչակեաններն ալ երբեք չեն կրնար
 յայտարարել թէ՛ առանձինն՝ ունին այն բոլոր
 ուժը որ հարկաւոր է ի գլուխ հանելու համար
 վիժխարի գործը զոր մեր ազգը պարտաւոր է
 կատարել : Ինչ ալ ըլլան երկու կուսակցու-
 թեանց ուժերը , զատ զատ՝ երբեք պիտի չհաս-
 նին զօրութեան այն երազուած ու բազմա-
 ցուած աստիճանին որ անհրաժեշտ է Գործին
 ամբողջական կատարմանը համար : Իրենց
 միացումը միայն կրնայ այդ լիակատար ուժը
 ձեւացնել , ջնջելով հայ յեղափոխական պայ-
 քարին ամենամեծ տկարութիւնը , ամենամեծ
 խոչընդոտը . — ներքին պատակտումը , եւ գո-
 յացնելով բարոյական ու նիւթական զօրու-
 թեան այն իրական բազմապատկումը որ ան-
 խուսափելի եւ անմիջական հետեւանքը պի-
 տի ըլլայ Միութեան : Դրօշակեաններն ինչ-
 պէս Հնչակեանները շատ լաւ գիտեն որ Ա-
 մերիկա , Կովկաս , Եգիպտոս հազարաւոր Հա-

յեր կան , — ազգին մեծամասնութիւնը . — Ռթ
 Միութեան կը սպասեն , յարելու եւ աջակցե-
 լու համար յեղափոխական գործին . այդիւրեւ
 Միութիւնը , այդ պահեստի մնացած խնշոր ու-
 ժէն զրկել է Գործը :
 Ազատական Օսմանցիներու Համաժողովին
 հայ պատգամաւորները Թուրքերուն մեղադրե-
 ցին իրենց ներքին պատակտումը . եւ երբ
 Թուրքերէն մին գիտել տուաւ . թէ Հայերն ալ
 երկու կուսակցութեանց բաժնուած են , այս
 տողերը գրողը պատասխանեց՝ «Կը տեսնէք աս-
 կայն որ Հայ կուսակցութիւնները բացարձա-
 կապէս համաձայն են այստեղ » : Անհր-
 րաժեշտ է , ազգին բարձրագոյն շահերուն
 համար , որ այդ համաձայնութիւնը տեւական
 ըլլայ այլեւս . եւ ան տեւական կ'ըլլայ միայն՝
 եթէ Միութիւնը իրագործուի : Արեւելեան
 խնդիրը իր ամենէն կնճառտ ասպնապներէն
 մէկուն մօտենալու վրայ է . առանձն է առաւել
 քան երբեք որ ամբողջ աղէք մէկ մարդու պէս
 ցցուի թշնամիին դիմացը , եւ գործէ վերջնա-
 կան , վճռական ճիգը՝ ձեռք ձգելու համար , ոչ
 թէ քիչ մը ողորմութիւն , այլ աննարար
 վաստկուած ազատութիւն մը :
 Եւ անուրանալի է որ բոլոր պարագաները
 այժմ նպաստաւոր են առաւել քան երբեք՝
 Միութիւնը իրականացնելու համար : Երկու
 կուսակցութեանց պաշտօնաթերթերը , «Դրօ-
 շակ»ը եւ «Նոր կեանք»ը , միեւնոյն ձգտում-
 ները կ'արտայայտեն , եւ իրարու դէմ ո եւ է
 պայքար դադրեցուցած են , գործելու կամքը
 երկուքին մէջ ալ ակներեւ է , ծրագրի եւ կալ-
 մակերպութեան մանրամասնութեանց տար-
 բերութիւններ են միայն որ երկու խումբերն
 իրարմէ կը բաժնեն : Քիչ մը բարի կամեցողու-
 թիւն բաւական է այդ բաժանումը ջնջելու
 համար : Սպասուածը , սա ամենապարզ բանն է
 որ Դրօշակեանները որոշեն մէկ քանի լիազօր
 նշանակել որոնք տեսակցին հնչակեան լիա-
 զօրներու հետ . ո եւ է պատճառ գոյութիւն
 չունի , եւ չի կրնար ունենալ , որ արդիւնէ այդ
 հանգիստումը : Լիազօրները կը բանակցին ,
 կը քննեն էական խնդիրները , կը ջանան
 բառնալ անջատող հարցերը . եթէ յաջողին ա-
 մէն կէտի մէջ համաձայնութեան յանգիլ , Մի-
 ութիւնը արդէն կատարուած կ'ըլլայ . այն
 պարագային ուր այդ ամբողջական համաձայ-
 նութիւնը չկարենայ կատարուիլ , այդ հանդի-
 պումը դարձեալ օգտակար պիտի ըլլայ . երկու

կուսակցութեանց լիազօրները, զիրար մօտէն տեսնելով, աւելի լրջօրէն պիտի ճանչնան զիրար, պիտի թօթափեն խել մը նախապաշարումներ ու կանխակալ կարծիքներ, որոնք թերեւս աւելի մեծ տեղ մը կը բռնեն երկու կուսակցութեանց անջատումին մէջ քան ծրագրի ու կազմակերպութեան տարբերութիւնները, եւ այն ատեն ուրիշ անջրպետ պիտի չմնայ իրենց միջեւ. բայց եթէ այդ ծրագրի եւ «թաքթիք»ի մանրամասնութիւնները, լիազօրները այն ատեն պիտի կարենան համաձայնութիւն մը գոյացնել մէկ քանի էական կէտերու վրայ, — օրինակի համար՝ 1. արդիւլեւ որ երկու կուսակցութեանց թերթերը այլեւս ու եւ է հրապարակային վէճ յարուցանեն, 2. ամէն կարեւոր պարագաներու մէջ բանակցութիւն մը ունենալ եւ համաձայն գործունէութեան համար խորհրդակցել. 3. գործողութեան ընդհանուր ծրագիր մը ի միասին մշակել, եւ, այխատութեան բաժանում կատարելով, որոշել իւրաքանչիւր կուսակցութեան գործի սահմանը, եւ պատրաստել միահաղօյն վերջնական պայքարը, որուն ամբողջ հայ ազգը պիտի մասնակցի: Այս երկրորդ պարագային երկու կուսակցութիւնները իրենց անհատականութիւնը կը պահեն, եւ, փոխանակ միանալու, ձուլուելու, կը «դաշնակցին» իւրարու հետ: Տարակոյս չկայ որ միացումը ամէն տեսակէտով նախընտրելի է. բայց, եթէ անկարելի ըլլայ միացումը, անհրաժեշտ է որ

գոնէ համաձայնութիւն մը կազմուի, որովհետեւ եթէ ան ալ չկատարուի, Միութեան խընդիրը՝ իր վիժումովը՝ անխուսափելի կերպով տեղի պիտի տայ կուսակցական կոիւնին վերարժարժուելուն, աւելի քան երբեք կատարի եւ վտանգաւոր կերպով: Մեր յեղափոխական վարիչները կ'ընեն այդ ազէտքին առաջին աննել, եթէ գոնէ այդ ջանքը չընեն, «պաւած» պիտի ըլլան ազգին դէմ:

Տաճիկներուն հանդէպ մեր ցոյց տուած համերաշխութեամբը կրցանք պարծենալ. ինչ մեծ ամօթ մեզի համար, եթէ Համաժողովին մէջ ցոյց տրուած այդ միաբանութենէն քանի մը ամիս յետոյ Տաճիկն ու Եւրոպային առջեւ պարզենք եղբայր եղբօր հետ անարգ գլուխ տուք մը:

Այդ ամօթը պէտք է խնայել ազգին:

Պէտք չէ ըսուի օր մը թէ Դրօշակեան Հայերը կրցան համաձայնիլ Մակեդոնացիներու հետ, բայց ոչ Հնչակեան Հայերուն հետ: Պէտք չէ ըսուի մանաւանդ թէ Դրօշակեան Հայերը փութացին պատգամաւոր զրկել Տաճիկներէ կազմուած Համաժողովի մը եւ մերժեցին լիազօրներ որոշել՝ պատասխանելու համար Հնչակեան Հայերուն հրաւերին:

Ասիկա պէտք չէ ըսուի, եւ կը յուսամ որ պիտի չըսուի:

Ա. ՉՊԱՆԵԱՆ

ՀԱՅԵՐԵՆ Ի ՀԱՊԵՏՐՈՍԱՆ



Յունուար 20ին Եթովպիոյ կաթողիկոս ա-
մենապատիւ հայր Ապուենէ Պրարոսը ճիպուկի
հասաւ . տաս օր յետոյ չըջպատեալ երեսունի
չափ ուխտաւորներով, Սուէզ մէկնեցաւ :

Սրբազան հայրը ազգով խփտի է . իբրեւ կը-
րօնական՝ եպիսկոպոսութեան աստիճան ունի,
իսկ Եթովպիոյ մէջ կաթողիկոսութեան պաշ-
տօն կը կատարէ, որովհետեւ հոն կրօնական
լիազօր եւ ամենարարձր ներկայացուցիչն է :
Եգիպտոս մեկնեցաւ խփտիներու կաթողիկոս
սրբազան հայրը այցելելու . անկից ուխտի պի-
տի երթալ Երուսաղէմ եւ պիտի վերադառնայ
իր կաթողիկոսութեան աթոռն՝ Ապտիս-Ապա-
պա , Եթովպիոյ մայրաքաղաքը :

Յուն. 26ի կիրակին , սրբազան հայրը քա-
ղաքիս յունական մատուռին մէջ սուրբ պա-
տարազը ունկընդրեց , ուր չորս դաւանանքի
բարեպաշտներ , հայ , յոյն , հայէջ եւ խփտի
ջերմեանդ կ'աղօթէին :

Պատարագէն յետոյ , սրբազան հայրը հետի-
ոտն ուղեւորեցաւ իր օթեւանը , չըջպատ-
եալ հայէջ եւ խփտի տիրացուներով , որոնք
խաչ ու դաւազան ի ձեռին , ձերմակ ու կար-
միր շապիկներու մէջ փաթթուած , զարդ կու-
տային քաղաքիս նշանաւոր փողոցներուն , երբ
կ'անցնէին Մենելիքի հրապարակէն Մարտէլի
փողոցը , որ կը տանէր դիրենք Շէֆնէրի պա-
լատը : Ականատեսներու բազմութիւնը մնծ էր :
Տեղացի բնիկներէն ուչ մնացողները շնչասպառ
կը վազէին տեսնելու համար այս նորութիւնը .
Հապէշները ցնծութեան մէջ էին . Խփտիները,
փառքէն զինովցած , խանդավառութիւններն չափ
չունէր :

Հայերն ալ անտարբեր չէին այս հանդէսին .
աչքի կը զարնէր տեղւոյս հին հարուստներէն
երևելիի Հայ մը , որ խոնարհարար սրբազան
հօր քայլերուն կը հետեւէր , սակայն ոչ նուազ
խանդաղատանօք քան ո եւ իցէ խփտի , աչքե-
րը շուրջը կը պտըտցնէր շարունակ՝ իր վրայ
ուշադրութիւն հրաւիրելով :

Կրօնքն ու կղերը շատ մնծ տեղ ունին Հա-
պէշխասանի մէջ . անոնց բարեկամները կրնան
ամէն կերպով օգտուիլ . ուստի մեր երեւելի
պարոնը գործունեայ մարդ էր , կ'ուզէր որ
Հապէշները զինքը տեսնէին այդ ճամբան .
սակայն այդ միայն չէր բաւեր , պէտք էր հե-
տեւէր մինչեւ պանդոկը , հոն ներսը , ուր ինքը
գլխէր թէ ինչ տեսակ կրնային շահիլ «խորթ
հայրերու» համակրանքներն ու բարեխօսու-

թիւնը , պաշտպանելու համար իր մահամերձ
մանրավաճառային շահերը :

Այս այն Հայն է որ Յովհաննէս Թագա-
ւորի օրով Եթովպիա հաստատուած ու անոր
չնորհներուն արժանացած է , երբ Հապէշները
Հայոց անունը հեռուէն կը լսէին ու մեծ սէր
եւ համակրանք ունէին դէպ ի այդ հեռաւոր
կրօնակից եղբայրները , երբ Յոյնը , Հրէան եւ
Եգիպտացին գեռ գրեթէ անծանօթ ու ատելի
էին այդ ժողովրդին , երբ միակ տարրը Հայն
էր որ այդ երկրի յարաբերութիւնները կը կա-
պէր արտաքին աշխարհի հետ :

Այս այն ժամանակուան Հայն է , երբ լուսա-
հոգի Թագաւորը , հայասիրութեան տենդին գի-
նովցած , հայ արհեստաւորն ու վաճառականը
կը քաջալերէր , հայ գաղթականութիւնը հոն
չստցնելու կը ջանար , եւ իր տիրապետած
հողին մակերեւոյթը բազմաթիւ Հայերով ծաղ-
կեցնելու հաճոյքն ունենալ կը ցանկար , երբ
վերջապէս երկրին հողեւորական իշխանու-
թիւնը հայ կղերին յանձնել կը փափաքէր եւ
ատոր համար Երուսաղէմի մեր պատրիարքա-
րանին հետ բանակցութիւններ կը կատարէր :

Թէ ինչպէ՞ս կատարուեցան այդ բանակցու-
թիւնները մեր կղերին հետ ու անպատեղ մնա-
ցին , թէ ինչպէ՞ս ընդունելութիւն կը գտնէին
հայէջ ուխտաւորները մեր Ս. Յակոբայ վան-
քին միաբաններէն , թէ ինչպէ՞ս Հապէշները
վերջ ի վերջոյ առանձին եկեղեցի մը շինելու
պէտքը զգացին եւ այսօր թէ՛ հոն թէ՛ հոս
անշատուած կը գտնենք զիրենք Հայերէն եւ
օրթոտքսութեան մօտեցած , — ասոնց ման-
րամասն բացատրութիւնները կը թողում ա-
ւելի գիտցողներուն . ես կը բաւականանամ
միայն մէկ քանի տեղեկութիւններ տալ Հա-
պէշխատան հաստատուած ժամանակակից Հա-
յերուն վրայ , թէ ի՞նչ դեր խաղացին այդ
պատմական հանգամանքներուն մէջ :

Անոնց դերը աննշան չէ եղած . առաջին
գործերին եղած է նախ իրենց ներկայու-
թեամբ յուսախար ընել Հապէշները , դէպ ի հայ
ազգի անոնց ունեցած համակրանքը ջնջելով :

Երկրորդ՝ աշխատած են կարելի եղածին չափ
այդ երկրը մութ պահել իրենց ազգակից-
ներուն աչքին , նկարագրած են զայն՝ վայ-
րենի , տաք , վատաւողջ , մէկ խօսքով կատար-
եալ դժոխք , որպէս զի միայն իրենք օգտուէ-
ին այդ երկրէն . կարելի եղածին չափ արգելք
հանդիսացած են հայ անհատներու հոն հասնե-
լուն . իսկ պատահմամբ Եթովպիա հանդիպող-
ները չարաչար աշխատացուցած են իրենց հաչ-
ուոյն , օգտուելով անոնց թշուառութե-
ան , հողմէական գերիներու պէս , առանց վար-
ձատրելու , եւ հազարումէկ դժուարութիւններ

յարուցանէ ինքնօրնութեամբ աշխատելով ապագայ շինելու մտադրութիւն ունեցողներուն :

Հայ կղերին Եթովպիա հաստատուելը վնասակար նկատած են , մտածելով թէ մի գուցե ատիկա գաղթային հոսանք մը բանար Հայոց համար դէպ ի պս երկրորդ եւ հայ արհեստաւորները ու վաճառականները հոն գալով իրենց հացը խլէին . ուստի պէտք էր այդ հոսանքը արգիլել : Իսկ կաթողիկոսը հայ բլլար թէ յոյն , խփտի թէ հրէայ , այդ իրենց համար միեւնոյն էր , քանի որ գիտէին զլուս ծագել , գետնահաւասար ստորնութեամբ ոտք ձեռք պագել ու շահերնին պաշտպանել , ինչպէս ատոր կենդանի ցրինակը կը ներկայացնէր անցեալ կիրճակի մեր տեսած Մարտէլեան փողոցի դերասանը :

Հապէշիստանի վաճառականութիւնը կը հասնի տարեկան տասը միլիոն ֆրանքի , եւ կ'արտադրէ փղոսկր , խահուէ , ոսկի , մեղրամոմ , կաշի , սիլիկի , եւն . թրուէ ներմուծում ունի կառու , մետաքսեղէն , գէնք , աղ , եւ տան ներքին պիտոյքներ որ զեռ նոր կը զարգանան :

Ինո ըսան թարի առաջ Հայերն էին այս արտադրութիւններն քրտաքին աշխարհի արհեստանոցներուն հետ փոխող գլխաւոր միջնորդները . իսկ այդ աի մը Հայերը չէին կրնար հասնիլ այս ընդարձակ երկրի վաճառականութեան եւ թող կուտային որ այս թանկագին իրեղէններուն մեծագոյն մասը փրտէր իր տեղը , երբ յոյն թափաղակները այցելեց այդ երկրը եւ գտնելով ընդարձակ հող գործելու կապուեցաւ անոր հետ , ապա Հրէայն , եւրոպացին եւ Հնդկը , ամէնն ալ քաջալերուեցան այդ նորալար իրկրի նախնական մարդիկնեցեղէն , որովհետեւ վաճառականութիւնը զարգանալով անոնց ալ կեանքը կը յեղաշրջէր եւ երկրին կենդանութիւն կուտար :

Այդպէս մերիները ապուշ անհետաւորութեամբ , նախապէս իրենց ազգակիցներէն , տեղի տուած եղան աւելի վտանգաւոր ու աւելի հսկայ գաղթականային քրչաւանքի մը , եւ կարծ ժամանակի մէջ այդ օտարազգիներէն մէկէ աւելի հարուստներ երկւցան , որ այսօր տասը միլիոնէն աւելի հարստութիւն ունին . ատոնք կաղմակերպեցին ու կաշկանդեցին վաճառականութիւնը իրենց ափերուն մէջ , եւ թողուցին Հայերը շատ համեստ ու խղճուկ հարստութիւնով մը սահմանափակուած , մրցման մէջ վերջնականապէս յաղթուած , ձեռնաթափ ու յուսահատ :

Մեր ամենէն հզօր մրցակիցները եղած են Յոյները . ատոնք շոյած ու շահասիրած են Հա-

պէշներու կրօնքը , ու զանոնք օրթոտոքսու թեան դիրկը քաշած են , երբ մենք զանոնք կը հեռացնէինք ու մէջտեղերնիս անգունդներ կը բանայինք . անոնք շահագործած են նաեւ Ռուսիոյ անուէր այս խաղերուն մէջ , ինչպէս առհասարակ Յունաց սովորութիւնն է՝ Ռուսիոյ հզօրութենէն իրենց հաշտոյն պարծենալ ու միամիտ ժողովուրդներէն ատով օգտուիլ : Միւս կողմէն իրենց թագաւորին ու Մենելիք կայսեր մէջ բարեկամութիւն հաստատած են , որ մեծ զարկ տուած է իրենց՝ քաղաքական եւ առեւտրական լայն ապարկէզ բանալու , մեծ ազդեցութիւններ ձեռք բերելու , ինչպէս կաշիք , մեղրամոմի եւ աղի մենաշնորհը անցեալ տարի եւ այս տարի Յոյն մը գնին 17000 ֆրանքի , ըստ Մենելիք կայսեր բարձրագոյն հրամանին . այդ Յոյնէն զատ ոչ ոք կարող է այդ նիւթերուն առեւտուրն ընել իր տէրութեան մէջ . կային մէկ քանի Հայեր որոնք իրենց գործ բրած էին ատոնց առեւտուրը , պարտաւորուեցան ձեռք քաշել . խահուէն արդէն կեդրոնացած է նոյն Յոյնին ձեռքը . կտան ու փղոսկրն ալ Հրեայ մը բռնած է , որուն հետ ոչ ոք կարող է մրցիլ . ոսկին եւ սիլիկին ալ Հնդկները գրաւեցին , որոնց այդ երկրը մտնելը հաղիւ երեք շորս տարի կայ . կը ցաւիք ըսեալ թէ միայն փերեղակութիւնը մնացած է Հայոց , ան ալ սղօրմելի ու տարտամ վիճակի մէջ . վերջերս վերին Հապէշիստանէն եկած նախակները շատ աննպաստ են . « Ինո խանութնիս լեցուն է ապրանքով , անցեալ տարուան բերածնիս այս տարի ալ չվաճառուեցաւ , Հնդկները հրապարակը բռնեցին » կը գրեն : Ժամանակակից Հայոց միայն թանձրամիտ ազգաութիւնը աչքի առջեւ բերելով , թերեւս չմեղանքի զիրենք այս մահացու պարտութենէն , բայց միաժամանակ չար ալ եղած են՝ սոգէ՞՞ ըլլալէ աւելի : Մինչդեռ օտարները նոր կը կազմակերպուէին ու կը ճիւղաւորուէին , ատոնք իրենց կազմակերպուած ու ճիւղաւորուած Sociéte Commerciale Ethiopienne ընկերութիւնը կը քայքայէին՝ ամէն մարդ իրենն անձնական գրպանը լեցնելու գնով պաշտօնը կատարելով , որով վերջապէս ընկերութեան հիմնադիրը , իրենց բարերբբը , կը անանկացնէին ու մուրացկանութեան կը դատապարտէին , եւ անոր թշուառ վիճակի մէջ մեղմելուն պատճառ եւ անոգ հանդիսատեսներ կ'ըլլային :

Բայց հարց է թէ իրենք ո՞ր աստիճան օգտուեցան այս հրէշային ապերախտութենէն . իրենցմէ մէկը՝ անպատուաբեր ընթացքով մը շահածը փճացուցած եւ այսօր վերջին ծայր թշուառութեան դատապարտուած է : Տարին

չբռնորած՝ մէկ ուրիշին տնեւն ու գոյքերը՝ դատական վճռով աճուրդի հանուելով ծախուեցան անվճար մնացած պարտքերու փոխարէն եւ ինքը իր սեփական տուները ուրիշի ձեռքով վերստին գնեց, ինքզինքը սնանկ հոչակելէ յետոյ: Այսպէս վերջացաւ Societe Commerciale Ethiopienneը որու հետքը այսօր չ'երեւնար:

Այստեղ հաստատուած թանձրամիտ շահագործներու խայտառակութիւնները դայթակզութեան կը հասնին. իրենցմէ մէկը հոս ամէն տեսակ խայտառակութիւններ ընելէ յետոյ, վերջերս Եւրոպա կը մեկնի քանի մը հարիւր հազար Ֆրանքի քրէտի գտնելու յոյսով. իմացուեցաւ որ այցաքարտեր տպագրել տուած է եղեր Ֆրանսերէն գրերով եւ այս վերառուածութեամբ՝ Fournisseur de sa Majesté Ménélik II, Empereur d'Ethiopie, եւ վիթխարի կնիք մըն փորագրել տուած: Բայց չկրնայով խաբել Եւրոպացիները՝ զիմպօ է մաքսպնենագութեան, զարձեալ Մենելիք կայսեր անունը շահագործելով: Այս բոլորը իմանալով Մենելիք կայսրը զայրացած է, ինչպէս նաեւ չվրիպելով Ֆրանսական կառավարութեան աչքէն՝ կէս ճամբան մնացեր է, անպատուութիւն քերելով նաեւ ձրպութիի դժբաղդ հայ գաղթականներուն:

Եթէ ունինք միւրթարութիւն մը այս երկրի մէջ, ան ալ այն է որ մէկ քանի երիտասարդ Հայեր, այս վերջին տարիներու մէջ հոս հաստատուելով, հակառակ նախանձոտ թանձրամիտներու իրենց սողլեւ դրած բոլոր արգելքներուն, միացնելով իրենց ճարպիկութիւնը ինքնօգնութեան ու սեփական աշխատանքի, յաջողեր են փայլուն գերքեր շինել:

Կը մաղթեմ որ իրենց յաջողութիւնը բաղմապատկուի, — եւ իրենց օրինակն ալ հեպտեոդներ ունենայ, որպէս զի հայ «գործի մարծի մարդ»-ը այդ հին տիպարը ջնջուի այլեւս:

Ճիպուտի

ՀեթոնիՄ

Բե՛ր յոգնած սրտից, հովի՛կ, գող ու բոյր.
 Այրբլ են նըրան սիրոյ խոցն ու ցաւ.
 Ինձ թանգ է ա՛յն քան քո քնքուշ համբոյր...
 Բայց հովն ինձանից հեռու սըլացաւ:
 Ասողի՛կ, իմ հոգուս ցուք տուր երկընքից.
 Նրսեմ է այնտեղ, չըկայ շող ու լոյս...
 Ասողիկը սահեց, թողեց պայծառ գիծ...
 Դէ՛հ, դարձի՛ր, չքնա՛րս վառիր սըրտիս յոյս,
 Սիրոյ արշալոյս:

Ժընէվ

Գ. Ա. ՌՓԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

օ—օ

ՀիՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԱՐԻՅԵՒ. — Ողբացեալ Լէոն Մարիյեթի եւ իր կնոջ բարեկամները սրտայոյզ գաղափարն ունեցած են այդ երկու ազնիւ էակներուն յիշատակը յաւերժացնելու համար, բարեգործական հիմնարկութիւն մը հաստատել, բացած են հաւաքանակութիւն մը, կազմելու համար գումար մը սրուն տոկոսովն ամէն տարի աղքատ ուսանող մը, ո եւ է քոզէ: Ֆրանսական Համալսարանին աշակերտելու միջոց ունենայ:

«Գիտէք, կը գրեն հանգանակութեան կազմակերպիչները՝ կոչին մէջ զոր ուղղած են Մարիյեթի բոլոր բարեկամներուն, թէ ի՛նչպիսի գատկը անոնց մօտ ջերմ պաշտպաններ կը գտնէին: միջազգային խաղաղութեան, կեղեքքւած ժողովուրդներու պաշտպանութեան, ընկերական արդարութեան, ալքօլամոլութեան գէմ պայքարի դատերը: Իրաւունք չունէինք մեր բարեկամներուն հաւասարապէս սիրելի եղող այս դատերուն մէջէն մին ընտրել եւ անոր ի նպաստ մասնաւորել մեր ձեռնարկը. մեր ջանքը պիտի կորսնցնէր այն նկարագիրը զոր կ'ուզենք տալ անոր, այն է յուշապահպանութեան գործի մը որ Լէոն Մարիյեթին եւ իր կնոջը միանգամայն սիրելի ըլլալը, մտերմամական գործի մը որ երկուքին ալ անձնաւորութեան գործը կրէր: Արդ, կար վայրկեան մը ուր տիկին Մարիյեթի հապարդն ու համբերատար բարութիւնը կը միանային, նախասիրուած գործի մը համար, գիտունին պայծառատես մտածումին ու գործիչին յամառ ձիւղին: Ամէն անոնք որ կրցած են մասնակցել Լէոն եւ Ժան-Մարի Մարիյեթի տանը մէջ շա-

Լըճակի ափին խոտվայոյզ կանգնած,
 Նըրա ջինջ ծոցում արցունք եմ թափում:
 Սիրածըս, լըճա՛կ, ափիդ չերեւա՛ց:
 Հեռքն եմ կորցըրել, տես, լաց եմ լինում: —
 Ահա խաղացին ջրերը վէտ-վէտ:
 Ձեփուռը քսեց հըսկայ քարափին.
 Ձեփիւտն ու կոհակ՝ իմ վըշտին անգէտ՝
 Ուրախ ճղփալով զարկեցին ափին:

բաթ օրերու եղբայրական երեկոյթներուն, գիտեն որ անոնց ձեռքը մասնաւոր բարեկամութեամբ մը կը բացուէր աղքատ եւ անոք ուսանողներուն որոնք խորհուրդի մը, կազմուած մը, բարեկամութեան մը կարօտն ունէին: Այդ էր մեր բարեկամներուն ամենէն մշտատեւ մտահոգութիւնը, — օգնել այդ պատանիներուն եւ օրիորդներուն՝ որ առանց շատ նեղութեան կամ վնասութեան անցընէին էեանքի այդ շրջանը որ իրենց համար տմենէն դժնդակը եղած էր:

«Մտածեցինք ուրեմն որ ուսանողներուն միշտ բաց եղող այդ տան յիշատակը պահպանելու համար, մեր առաջին պարտականութիւնն էր կենդանի պահել մաս մը այն համալսարանական եղբայրութենէն զոր մեր բարեկամները երազած եւ ապրած էին: Եւ ձեզի կ'առաջարկենք յատկացնել եկամուտն այն գումարին զոր պիտի կազմենք ձեր ամենուր աջակցութեամբ, եւ որուն մատակարարութիւնը պիտի յաւանանք Բարիքի Համալսարանին, Դրպարութեանց Ֆարքլէթին կամ Բարձր Ուսմանց Դպրոցին (կրօնական գիտութեանց բաժին) հետեւող ուսանողի մը օգնելու, ա՛ռանց սեռի, կրօնքի կամ ազգի խտրութեան: Ամէն տարի, այսպէս, Լէոն եւ Ժան-Մարի Մարիյեէ պիտի վերապրէին, խորհրդապահ աջակցութեան ժէթով մը, այն միջավայրին մէջ ուր կը գործէին եւ կը յուսային զեռ ա՛լ աւելի վեհանձնորէն գործել...»

Պէտք չունինք յիշեցնելու մեր ընթերցողներուն թէ ո՛րքան մեծ տեղ մը բռնած են հայ ժողովրդին ցաւերը Մարիյեէի եւ իր կնոջ մտահոգութիւններուն մէջ, եւ թէ ի՛նչ պիտի անձնուէր ու ազդեցիկ աջակցութիւն մը բերած են անոնք մեր դատին. կը հրաւիրենք մեր ազգակիցները մասնակցել այս սրտաշարժ հանգանակութեան, — ապացուցանելու համար որ մենք գիտենք յարգանք ու երախտագիտութիւն յայտնել մեր ցաւերն ամօքելու ջանացող ազնիւ հայաւէրներու յիշատակին:

Հանգանակութիւնը կազմակերպողներուն մէջ կան Պինէի, Պիւիսոնի, Գլէյի, տը. Լըկրէնի, Կապրիէլ Մոնոյի, Ֆրետերիք Բասիի, Ժան Բեւլիի, Շարլ Բիշէի պէս անձնաւորութիւններ: Նուիրատուութիւնները պէտք է զրկել հետեւեալ հասցէին՝ Mr. Jean Schlumberger,

78 Rue d'Assas, Paris.

ԲԱՐԻՉԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ. — Պ. Ա. Ահարոնեան, ծանօթ գրագէտը, վերջերս Բաֆէ Վոլթէնի մէջ հաւաքելով Բա-

րիզի հայ ուսանողները, հրաւէր կարգացած է անոնց որ իրենց անշարժութիւնը թօթափեն վերջապէս, վերակազմեն իրենց ուսանողական Միութիւնը որ քայքայուած էր «Բաշալեան երեկոյթ»էն ի վեր, ու Եւրոպայի Հայ Ուսանողաց Միութեան: ձեռնարկներուն աջակցին իրենց ուժերուն չսփոլը: Բարիքի հայ ուսանողներէն անոնք որ ներկայ գտնուած են այն բանախօսութեան, որոշած են վերականգնել իրենց Միութիւնը, եւ զայն մշտական գործօն յարարութեան մը մէջ դնել Եւրոպայի Հայ Ուսանողաց Միութեան հետ:

Ջերմօրէն կը շնորհաւորենք պ. Ահարոնեանը այս գեղեցիկ նախաձեռնութիւնն ունեցած ըլլալուն համար, եւ կը մաղթենք որ Բարիքի հայ ուսանողները այսուհետեւ գիտնան պահպանել իրենց Միութիւնը, առանց պէտք ունենալու որ Ահարոնեաններնեղութիւնը յանձն առնեն իրենց յիշեցնելու պարտականութիւնը զոր ունին իրենք իրենց հանդէպ:

ԲԱՐԻՉԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵՆՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ. — Բարիքի Հայոց Բարեգործական Ընկերութեան երեկոյթը տեղի ունեցաւ մարտ 18ի իրիկունը, Սալ տէ-զէնժէնէօր սիվիլի մէջ: Պ. տ'Էսթուրնէլ տը Գոնսաթան երեսփոխանը իր հովանաւորութիւնը շրնորհած էր երեկոյթին, ու պ. պ. Ռուանէ ու Տընի Բոշէն պատուոյ քոմիթէին անդամակցիլ յանձն առած էին, բայց երեքն ալ ներկայ չէին՝ դժբաղդաբար՝ երեկոյթին: Բաւական հոծ բազմութիւն մը լեցուած էր սրահը, մեծ մասամբ Հայ:

Պ. Մունէ-Սիւլլի արտասանեց, հրաշալի կերպով, Հիւկոյի «Սաղաւարախն արծիւը», եւ տիկին Էկլոն, Օքերայի մեծագոյն երգչուհիներէն մին, անուգալկան արուեստով մը երգեց Մասնէլի «Նաէլը» եւ Շիւպէրթի մէկ «մեյստի»ն: Օր. Տաֆթի, Օքերա-Գոմիքէն, պ. Կորտ, Գոնսաէրվաթուարի աշակերտ, եւ ուրիշ մէկ քանի արուեստագէտներ երգով կամ արտասանութեամբ մասնակցեցան երեկոյթին: Պ. Ֆիտըլեան երգեց մէկ քանի հայերէն երգեր, «Արի իմ սոխակ» եւն: Տիկին Սըկոն-Վէպէր եւ օր. Տելվեր, Գոմէտի-Ֆրանսէզէն, եւ օր. Աքթէ, Օքերայէն, խոստացած էին մասնակցել երեկոյթին, բայց չէին կրցած ներկայ գտնուիլ:

Երեկոյթին ամենամեծ զարդերէն մէկն եղաւ օր. Ճանըմեան, երիտասարդ հայ դաշնակահարուհին որ վերթիւղի առաջնակարգ յատկութիւններ ցոյց տուաւ Շոքէնէն եւ Լիսթէն մէկ մէկ կտոր նուագելով:

Իսպուած է 1902 թ. ըստանորոգութիւնը

Մ Ո Ւ Ր Ճ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

Նոր շրջան Բ. տարի

Խմբագիր-հրատարակիչ Կ. ԿՐՍՍԻՂՆԻԿԵԱՆ

Խմբագրութեան անդամներն են՝

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՅՈՒՍԵԱՆ և ԼԷՕ

Բաժանորդագինը . — Ռուսաստանում տարեկան 10 ռուբ. , վեցամսեայ 6 ռուբ. : Արտասահման՝ տարեկան 12 ռուբ. , վեցամսեայ 7 ռուբ. :

Հասցէն փոխելու համար պէտք է՝ ուղարկել 40 կոպէկ :

Ապստիկ կամ ձրի ոչ ոքի չէ՝ ուղարկուած ՄՈՒՐՃ :

Հասցէ՝ Tiflis, Rédaction de la revue "Mourtch "

ԼՈՒՄԱՅ

Դրական հանդէս

Կը հրատարակուի տարեկան երկու գիրք :

Բաժանորդագինն է, երկու գրքի համար 3 ռուբլի, իւրաքանչիւր գրքին առանձին՝ 2 ռուբլի :

Դիմել՝ Թիֆլիս, խմբագրութիւն «Լուսայ»ի :

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Կը հրատարակուի տարեկան երկու գիրք :

Երկու գրքի տարեկան բաժանորդագինն է՝ 3 ռուբլի կամ 10 ֆրանք :

Դիմել՝

Ervand Lalayantz, Séminaire Nersissian Tiflis, Caucase

ԱՏՈՄ ԵՍՐՅԱՆԵԱՆ

ՊՔԲՅԱԶՆՈՐԷՆ

Դին 1 ֆրանք

Դիմել՝ M. A. YARDJANIAN

12, Boulevard Arago, Paris.

ԱՂԲԻԻԲ

Պատկերազարդ ամսաթաթերթ

Բաժանորդագինն է՝ տարեկան, Ռուսիոյ համար 3 ռուբլի, արտասահմանի համար 8 ֆրանք :

Հասցէն՝ Tiflis, Rédaction de la revue AGBUR

ՀԱՆԳԷՍ

ԱՄՍՈՐԵԱՅ

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը :

Բաժանորդագինն է, արտասահմանի համար, տարեկան 10 ֆրանք, վեցամսեայ 6 ֆրանք : Ռուսիոյ համար, տարեկան 4 ռուբլի, վեցամսեայ 2 ռուբլի 30 կոպէկ :

Դիմել՝ A la Rédaction de la Revue «Hantess» VII/2 Mechitaristengasse, 4. VIENNE Autriche

ՏԱՐԱԶ

Պատկերազարդ շաբաթաթերթ

Բաժանորդագինն է տարեկան՝ Ռուսիոյ համար 6 ռուբլի, արտասահմանի համար 15 ֆրանք : Հասցէն՝ Tiflis. Rédaction du journal TARAZ

ԱՐԱՐԱՏ

Պաշտօնական ամսագիր հայրապետական ամբողջ Ս. Էջմիածնի

Բաժանորդագրութիւնն է, տարեկան՝ Ռուսաստանի համար՝ 4 ռուբլի, արտասահմանի համար՝ 13 ֆրանք :

Կը խնդրուի բաժանորդներէն որ իրենց հասցէները մաքուր եւ անսխալ գրեն :

Դիմել՝ Rédaction de la Revue «Ararat» ETCHMIADZIN (Caucase)

ՎԱՀԱՆ ԹԵԿԷԱՆ

Գ Ո Գ Ե Ր

Դին 3 ֆրանք

Դիմել՝ M. VAHAN TÉKÉIAN

6, rue d'Arcole, Marseil le.

ԱՂՍԷՄՏԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիսը կը հրատարակուի ամիսը անգամ մը :
 Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) ,
 2 տոլար (Ամերիկա) , 5 րուպլի (Ռուսիա) :
 Վեցամսեայ՝ 10 ֆր. (Ֆրանսա) , 6 ֆր. (օտար երկիրներ) , 1 տոլ. (Ամերիկա) , 3 րուպլ. (Ռուսիա) :
 ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :
 Ձեռագիրները հա չեն դարձուիք :
 Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօդուած եւ բաժանորդագրին ղրկել հետեւեալ հասցէին

A. TCHOBANIAN
 17. RUE LA BRUYERE
 PARIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիֆլիս —	Պարոն Գէորգ Մելիք-Կարապետեան
Պաքու —	» Ա. Մ. Մոցիկեան
Կահիրէ —	» Ա. Ա. Թորգոմեան
Ռուսճուք. —	» Նշան Ս. Թորոսեան
Ֆիլիպէ. —	» Ա. Տեմիրճիպաչեան
Պուքրէշ. —	» Արիս Լազար
Դաւրէժ. —	» Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Նորք. —	» Կատարեան
Բրուկլինէնս. —	» Նաղարէթ Թաթեոսեան
Ֆրեզնօ. —	» Աւագ Կարապետեան
Իսթ Ուոթըրթաուն. —	» Մանուկ Գալստեան
Ուոթըր. —	» Երուանդ Յակոբեան
Չիքազօ. —	» Ա. Կարակալուրեան
Պրս թոն. —	» Կ. Յ. Բարակիւլեան